№ 247 ՇԱԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ — 1915 — ՇԱԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 247

ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE - S. LAZARE

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲԼԻ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
սրանով յայտնում է ի գիտութիւն, թէ կիրակի, նոյեմբերի 8-ին, երեկ. ժամը 7-ին, Ընկերութեան ընթերցարանի դահլիճում (Արաս-Արաթեան հրապարակ № 7)
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
հոկտեմբերի 31-ին չը կայացած ժողովի փոխարէն։ Այս ժողովը կը կայանայ անկախ ներկայ գտնվող անդամների թւից։
Զբաղմունքի առարկաներն են.
1) Կենտրոնի և ճիւղերի 1916 թ. նախահաշիւների քննութիւն և հաստատութիւն։
2) Ընկերութեան սեփական օրգան ունենալու խնդիրը։
3) Ընթացիկ հարցեր։
ստ. 802. 2—1

ՔԱՐԹԱԼԻՆԵԱՆ ՈՒԴԵԼՆԻ ԿԱԼՈՒԱԾՔԸ
առաջարկում է՝
Խաղողի ամերիկական որթեր՝ 1000 մէտրը 10 ռուբլի։
Պատուաստի ճիւղեր՝ «Սապէրավի», «Կաբերնէ», «Ալիգոտէ», «Րկա-Ցիտելի» տեսակներից, 1000 մէտրը 5 ռուբլի։
Միամեայ խնձորենիներ՝ Ռանետ-Կանադեան, Շամպանեան, Շաֆրան, Կալվէլ՝ սպիտակ և կարմիր, Սինապ-կանդիլ—1 հատը 20 կոպէկ, 100 հատը 16 ռուբլի։
Գները՝ առանց փաթեթի. Կասնկա կայարան, Անդրկ. երկ.։
Հասցէն՝ Тиф. губ. почт. отд. Мухранъ, Удѣлы.
ստ. (հ. շ.) 786. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հայոց Դրամատիկ Ընկերութիւն
Այսօր, շաբաթ, նոյեմբերի 7-ին,
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը ներկայացնէ
ԱՒԱԶԱԿՆԵՐ
Դրամա 7 պատկ., Շիլլէրի, թարգմ. Փ. Վարդանեանի։
Սկիզբը երեկ. ժամը ճիշդ 8-ին։
Տոմսակները 50 կ. մինչև 1 ր. 25 կ.։
Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ կլուբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։
ստ. 800. 1—1

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
ստ. 779. 50—10

ԲԺԻՇԿ
Ի. ԵԱ. ԳՕԿԻԵԼՕՎ
(Նախկին օրդինատոր Կալինկինեան հիւանդ. Պետրօգրադում)
Ընդունում է հիւանդներին վեներական, սիֆիլիս, կաշուի եւ ջղային հիւանդութիւններից։
Ամեն օր՝ առ. ժամը $9^{1}/_{2}$—12.
եր. » 5—$7^{1}/_{2}$.
Հասցէն՝ Միխայլովսկի պր. № 113.
(օ. մ.) 801. 12—2

ԱՍԽԱԲԱԴԻ ծխական դպ. համար ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՎԱՐԺՈՒՀԻ
Յովնանեան կամ Գայեանեան դպրոցն աւարտած, որ պիտի աւանդէ՝ թւաբանութիւն 18 դաս, հայոց լեզու 6 դաս։ Ռոճիկ 600 ռուբլի։ Ճանապարհածախք 30 ռուբլի։ Դիմել հեռագրով դպրոցի Հոգաբարձութեան։
ստ. 803. 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) ստ. 515. 100—65

Ներքին հիւանդութեան
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՑՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
ստ. (ա. օ.) 504. 100—82

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը $1^{1}/_{2}$-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելէֆոն № 16—67։
ստ. 753. 50—16

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 նոյեմբ.

ՑԵՏԻՆԻԷ.—«Պրէսս-Բիւրօն» յայտնում է. «Մենք բոլոր զօրաճակատների վրա վանեցինք թշնամու կատաղի յարձակումները և պատճառեցինք նրան ծանր կորուստներ։ Սանջակի զօրքի կազմից չերնոգորական գումարտակը գերեց աւստրիական մի ամբողջ վաշտ իր օֆիցէրներով»։

ՊԱՐԻԶ.—Նոյեմբերի 2-ին ցերեկով բուլղարները դադարեցրին իրանց յարձակումները Ցրնայի ձախ ափի մեր զօրաճակատի դէմ, Կրիվօլակից դէպի արևմուտք և ետ քաշվեցին դէպի Արխանգելի գագաթները, թողնելով կռւի դաշտում մեծ թւով դիակներ։ Երեքօրեայ կռւից յետոյ բուլղարները կորցրին 4000 մարդ։ Մեր կորուստներն աննշան են։ Մենք ռմբակոծեցինք Բաբրովօյից դէպի հիւսիս թշնամու սայլերը, որոնք դիմում էին դէպի Ստրումիցա, որ բուլղարական քաղաք է համանուն գետից ոչ հեռու։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ամբողջ զօրաճակատի վրա ընդհանուր առմամբ փոփոխութիւն չը կայ։

Միտավայի խճուղու շրջանում Օլայից դէպի հարաւ-արևմուտք լոյս նոյեմբերի 4-ի գիշերը գերմանացիք առաջացան, բայց մեր թնդանօթային կրակը ցրեց նրանց։

Դվինսկից դէպի արևմուտք, Սվենտէն լճի շրջանում թափված են մեծ քանակութեամբ գերմանական դիակներ։

Դրիսվիատա-Բօգինսկօէ լճերի զօրաճակատի վրա թշնամին տեղ-տեղ ռմբակոծում էր սաստիկ։

Ստիրի գետի ձախ ափում Կովէլ-Սարնա երկաթուղագծի շրջանում հակառակորդը նոյեմբ. 3-ին առաջացաւ Մեդվէժի գիւղի մօտից դէպի Ն. Պօդչերվիչի, բայց անաջող։

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում տեղի էր ունենում կատաղի թնդանօթաձգութիւն Ժիվանշի անտառի մէջ։ Մենք շեշտակի ռմբակոծութեան ենթարկեցինք թշնամու խրամատները Գէբբէկալի մօտ։ Սոմմա հովտում, էն գետի հիւսիսային ափում մենք եռանդով ռմբակոծեցինք թշնամու խրամատները։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Ամբողջ զօրաճակատի վրա ուժեղ թնդանօթաձգութիւն է. թշնամին կատաղի ռմբակոծութեան ենթարկեց երէկ Մօսսա և Լուչինիկօ ծաղկեալ գիւղերը՝ Իզօնցօ հովտում, որոնք այժմ ծխացող աւերակների են փոխվել։ Գօրիցայում մեր զօրքերը ձեռք ձգեցին թշնամու ամրութիւններից մէկը, որի մէջ գտնվեցին դիակոյտեր և գրաւեցին մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Կարսօյում թշնամին նոյեմբերի 3-ի գիշերը և միւս օրվայ առաւօտը վերսկսեց իր յարձակումները մեր գրաւած դիրքերի դէմ, բայց ամենուրեք վանվեց, կորցնելով 60 գերի և 2 գնդացիր։ Թշնամու աէրօպլանները երէկ ռումբեր նետեցին Ալա քաղաքի վրա, բայց վնաս չը պատճառեցին։

ԼՕՆԴՕՆ. — Անգլիական «Տրինէգլաս» և «Լուզիտանիա» շոգենաւերը ընկղմվել են. երկրորդի նաւաստիները ազատվել են և ափ են իջել։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ «Անգլիա» հիւանդանոցային նաւը Լամանշում կպել է ականի և ընկղմվել։ Նրա վրա գտնվող 365 մարդուց մօտ 300-ին ազատել է մի նաւ. մի ուրիշ նաւ, որ շտապել էր օգնութեան, նոյնպէս կպաւ ականի և ջրասուզվեց։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

ԹԷՀՐԱՆ.—Թիւրքաց դեսպանը, ինչպէս և գերմանական ու աւստրիական դեսպանները դեսպանատների և միսիաների պաշտօնեաների և ընտանիքների հետ մեկնեցին Թէհրանից և դիմեցին դէպի Կում։

Մեր թշնամիները մինչև վերջին ծայրայեղութիւնը յոյս ունէին՝ շահի և մինիստրների վրա ճնշում գործ դնելով՝ իրանց ձեռքը ձգել իշխանութիւնը, Պարսկաստանի վիճակի տնօրինութիւնը և կառավարութեան յետագայ գործողութիւնների ղեկավարութիւնը։ Նրանք վճռեցին մեկնել միայն նրանից յետոյ, երբ չաջողվեց նրանց ծրագիրը՝ հեռացնելու շահին և կազմելու կաբինէտը ազդեցիկ անձերից ռուս զօրքերի արշաւանքի լուրերի ազդեցութեան տակ։

Միաժամանակ Թէհրանում մեր թշնամիների կրած անաջողութիւնների հետ, Պարսկաստանի մի այլ մասում, Թիւրքական սահմանին մօտ, թիւրքերը և գերմանացիք պարտութիւն կրեցին, որ առաջին նշանակութիւն ունի Պարսկաստանի յետագայ դէպքերի համար։ Բաղդադը անգլիացիներից պաշարվելուց յետոյ, Պարսկաստանում և Թիւրքիայում գտնվող մեր հակառակորդների փոխադարձ կանոնաւոր կապը դադարեց և մեր թշնամիները ստիպված եղան յարաբերութիւն պահպանել Թիւրքական սահմանի հետ դժուարին լեռնանցքներով Պարսկական Քիւրդստանի վրայով Սէննէի և Սուլէյմանիէի վրայով։ Սեննէի շրջանում լեռնանցքները գրաւեց եսաուլ Մամօնովը ռուս պահակների և պարսիկ կօզակների նուիրված մասի հետ։ Ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը թիւրքերը և գերմանացիք, ղեկավարելով մօտ 500 հայդուկների, գրաւելով անանցանելի լեռնադիրքերը և ամրացնելով նրանց խրամատներով յամառ կռւի բռնվեցին Մամօնովի զօրաբաժնի հետ։ Երէկ Մամօնովին աջողվեց թնդանօթային կրակով ետ մղել հակառակորդին և գրաւել նրա դիրքերը։ Հակառակորդը, հետապնդվելով Մամօնովի զօրաբաժնից, նահանջում է Թիւրքաց սահմանի ուղղութեամբ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

4—5 նոյեմբ.

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պօլսից հաղորդում են, որ պարլամենտն ընդունեց զինուորական մինիստրի պահանջած 150 միլիոն պիաստր գումարը՝ Անգօրա-Էրզրում, Էրզրում-Զունգուլդակ և Մուրադլի-Րօդօստօ երկաթուղագծեր կառուցանելու, ինչպէս նաև այդ գծերի վերջին մասերում նաւահանգիստներ կառուցանելու համար։

ԱԹԷՆՔ.—Դընի-Կօշէնը եկաւ երէկ երեկոյեան ժամը 11-ին և կայարանում դիմաւորվեց արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչներից և մի քանի ականաւոր յոյներից։ Քաղաքային խորհուրդը հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուեց հիւրին։ Փողոցները գեղեցիկ հրավառված էին։ Չը նայած ժամանակի ուշ լինելուն, «Գրանդ-Բրիտանիա» հիւրանոցի առաջ ժողովվեց ամբոխ, որ ողջունում էր Դընի-Կօշէնին։ Վերջինս պատշգամը ելաւ և ճառով շնորհակալութիւն արաւ։

Ի պատիւ Ֆրանսիայի ցոյցերը շարունակվեցին երէկ մինչև կէս գիշեր։ Առաւօտեան ոչ մի միջադէպ չեղաւ։ Դընի-Կօշէնը ընդունեց մի քանի այցելուների, իսկ երբ նա դուրս էր գալիս հիւրանոցից, որպէսզի այցելէ Սկուլուդիսին, բազմաթիւ ամբոխը ողջունում էր նրան բացագանչելով «կեցցէ Ֆրանսիան»։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատում, պատասխանելով զինուորական ծառայութեան առիթով ուղղված հարցին, Ասկվիտը ասաց, որ նա յոյս ունի և հաւատում է, որ անհրաժեշտութիւն չի ներկայանայ ստիպողական միջոցներ ձեռք առնել ազգաբնակութեան դէմ. մանաւանդ երիտասարդները և ամուրիները յօժարակամ գրվում են զինուոր։

ՊԱՐԻԶ.—Ասկվիտը, Գրէյը, Լլօյդ Ջօրջը և Բալֆուրը երէկ առաւօտ խորհրդակցեցին արտաքին գործերի մինիստրութեան շէնքում Բրիանի, գեներալներ Գալլիէնիի, Լակազի և Ժոֆֆրի հետ։ Այդ խառն առաջին խորհրդակցութիւնն ունենալու է նախապատրաստական նշանակութիւն անհամեմատ լայն խորհրդակցութիւնների համար, որոնց մասնակցելու են նաև Ռուսաստանի և Իտալիայի ներկայացուցիչները։ Դրանով սկսում է իրականանալ գործնականապէս գործողութիւնների այն միութիւնը, որի մասին խօսեցին Ասկվիտը և Բրիանը, որոնք անհրաժեշտ գտան ի մի միացնել դաշնակիցների տակտիկան։

Անգլիական մինիստրներն ընդունվեցին Պուանկարէից Ելիսեան պալատում, ուր կայացաւ երկարատև խորհրդակցութիւն, որին ներկայ էին Գալլիէնին, Լակազը, Րիբօն, Մալվին և Ժոֆֆրը։

Երէկ առաւօտ Ասկվիտը, Գրէյը, Լլօյդ-Ջօրջը և Բալֆուրը խորհրդակցեցին Բրիանի հետ Ժոֆֆրի մասնակցութեամբ։ Ցերեկով անգլիացի մինիստրներն ընդունվելու են Պուանկարէից։

Պատերազմական գործերի սենատական մասնաժողովը Կլէմանսօյի նախագահութեամբ միաձայն բանաձև ընդունեց, որի մէջ պահանջվում է, որպէսզի ֆրանսիական զօրքի մէջ անսահմանափակ գործադրվեն խեղդող գազեր։

Ֆրանսիայի երախտագիտութիւն ու սէր արտայայտելու նպատակով, Պարիզում գտնվող արտասահմանեան գաղութի մի խմբակ հիմնեց Ֆրանսիայի արտասահմանեան գաղութների միութիւն՝ պատերազմի զոհերին օգնութիւն ցոյց տալու համար։

Լրագիրները յայտնում են, որ 300 երիտասարդ անգլիացի երէկ կամաւոր են գրվել անգլիական հիւպատոսի մօտ։

Մարսէլլից տեղեկացնում են, որ առանձին կարգադրութեան համաձայն Մարսէլլի նաւահանգստում այլ ևս չեն ընդունվելու առաքման համար Յունաստան հասցէագրված ապրանքներ։

Պարիզի քաղաքային խորհուրդը որոշում կայացրեց, որպէս զի դաշնակից պետութիւնների այն հպատակները, որոնք պէտք է կանչվեն զինուորական ծառայութեան իրանց երկիրներում, ստիպված լինեն մեկնել արտասահման կամ մտնել ֆրանսիական զօրքի մէջ, իսկ մերժման դէպքում ուղարկվեն ստիպողաբար յատուկ նրանց համար հաստատված ժողովատեղիները։

Չերնօգորական գեն.-հիւպատոսարանը յայտնում է, որ, հակառակ գերմանական աղբիւրներից բղխող տեղեկութիւնների, Նիկօլայ թագաւորը բոլորովին առողջ է և անձամբ ղեկավարում է ռազմական գործողութիւնները։ Գահաժառանգը մեկնել է Իտալիա՝ առողջութիւնը վերականգնելու համար։

ՀՌՕՄ.—Արտաքին գործերի մինիստրը հեռագրով իրազեկ արաւ Իտալիայի ներկայացուցիչներին չէզոք երկիրներում, որ երբէք թշնամին այնպիսի ծայրայեղ գազանութիւն չէ գործել, ինչպէս «Անկօնա» շոգենաւը ընկղմելիս, որի վրա կային մի քանի ամերիկացիներ և Ամերիկա ուղարկվող ապրանքներ։ Թունիսի ծովափում թշնամու սուզանաւն առանց որևէ նախազգուշացման սկսեց ռմբակոծել «Անկօնան»։ Երբ մակոյկները իջեցրին, թշնամին կրակն ուղղեց նրանց մէջ գտնվող սարսափահար ճանապարհորդների դէմ։ Վերջապէս, նետվեց ական, որ մի քանի րոպէի մէջ ընկղմեց շոգենաւը։ Այդպիսով խեղդվեցին աւելի քան 200 մարդ, որոնց թւում մի քանի կանայք և երեխաներ։

Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ յունական կառավարութեան առաջ կատարած իր վերջին քայլերի մէջ Իտալիան գործեց դաշնակիցների հետ միանգամայն համերաշխ։ Բացի այդ՝ իտալական կառավարութեան վճիռը ռազմական գործողութիւնները նաև նոր զօրաճակատի վրա տարածելու մասին՝ հիմք է տալիս վստահութեամբ վերաբերվել այն բանին, որ հայեացքների լիակատար միութիւն է տիրում Իտալիայի և դաշնակիցների միջև։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պարգևատրվում է Գէօրգիևսկի թրով զօրահրամանատար գեներալ Բրուսիլովը։

Պետական Դումայի բիւջէտային մասնաժողովը, լսելով մասնաժողովի նախագահ Ալէքսէենկոյի նամակը, որի մէջ նա խնդրում է, ի նկատի ունենալով իր տկարութիւնը, ընտրել նոր նախագահ, որոշեց չընտրել նոր նախագահ և ցանկութիւն յայտնել Ալէքսէենկոյին շուտով ապաքինվելու։ Ալէքսէենկոյի փոխարէն մասնաժողովը ընտրեց ելևմտի նկատմամբ տեղեկաբեր Ֆիրսով 1-ին, իսկ ելևմտի եկամտային մասի նկատմամբ տեղեկաբեր Րժևսկին։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 նոյեմբերի

ՎԻՆՆԻՑԱ.—Գիւղացի Բուլատովը երկրագործութեան մինիստրութեանը նուիրեց աւելի քան 900 դեսեատին երկու կալուածք՝ կէս միլիօն ռուբլի արժողութեան, որպէս զի նրանց վրա կառուցվեն գիւղատնտեսական միջնակարգ դպրոցներ։

ԿԻԷՎ.—Երկարատև հիւանդութիւնից յետոյ մեռաւ 76 տարեկան հասակում Ֆլաւիան արքեպիսկոպոսը, աշխարհիկ կեանքում՝ Նիկօլայ Գօրօդեցկի։ Հանգուցեալը 13 տարի Կիէվի միտրոպոլիտ էր։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ դրութիւնը Աթէնքում մնում է լուրջ։ Քառեակ համաձայնութեան ներկայացուցիչները հրահանգի են սպասում իրանց կառավարութիւններից, որպէսզի պահանջեն յունաց կաբինէտից տալ ամենահաստատ երաշխիքներ այն մասին, որ Յունաստան մտնող սերբ և անգլօ-ֆրանսիացի զինուորները զինաթափ չեն արվի։ Կարծում են, որ Կօշէնի Աթէնք գալը կունենայ իր բարերար ազդեցութիւնն ի շահ քառեակ համաձայնութեան։

◆ Չերնօգորական արտիլերիան Լօվչէն լերան վրայից ռմբակոծում է Կատարրօն։

◆ Աթէնքում սպասվում է Կիտչեները։

◆ Վառնա են եկել թիւրքական երկու դիվիզիա և մի քանի գերմանական սուզանաւեր։ Ռուսաց զօրքերի ափ իջնելու երկիւղից սպասվում են կրկին թիւրքական զօրքեր բուլղարներին փոխարինելու համար, որոնց ուղարկում են այլ ռազմաբեմեր։

◆ Անգլիան վճռական միջոցներ է ձեռք առել Յունաստանի դէմ, որպէս զի վերջինս զինաթափ չանէ յունական երկիրն անցած սերբ զօրքերին. անգլիական ջրերում գտնվող յունական նաւերը բռնվել են։

◆ «Б. В.» լրագրի մէջ Շումսկին մատնանշում է, տուեալների հիման վրա, որ թշնամու ուժերը ներկայանում են այսպէս. ֆրանսիական զօրաճակատի վրա 2.100,000 մարդ, ռուսական զօրաճակատի վրա 2 միլիոն, իտալական զօրաճակատի վրա՝ մօտ 300,000 և սերբիական զօրաճակատի վրա աւելի քան 300,000։

◆ Զինուորական աղբիւրներից յայտնում են, որ շուտով Գալիցիան դառնալու է վճռական գործողութիւնների ասպարէզ։ Երկու կողմերն էլ հսկայ ախոյեանների նման սպասողական դրութեան մէջ են։ Զարտօրիյսկի մօտ կատաղի կռիւները շարունակվում են մի շատ կարևոր ռազմագիծքի համար։

◆ Գերագոյն Զօրահրամանատարի կայանն է մեկնել ներքին գործերի մինիստրը։ Այնտեղից վերադարձաւ արտաքին գործերի մինիստրը։

◆ Իտալիան վճռել է թոյլ չը տալ բուլգարներին գրաւելու Դուրացցօն։

◆ Ռումինական ջրերում երևացել է աւստրիական մի ականանաւ։

ԴԻԼԼՈՆԸ ԲԱԼԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անգլիացի յայտնի հրապարակախօս Դիլլօնը Հռոմից հեռագրում է «Daily Telegraph»-ին.

«Ռազմական դրութիւնը այն մասում, որը շօշափում է Իտալիայի շահերը և գործելակերպը, որոշ չափով փոխվել է վերջին ժամանակներս. այդ բանը պէտք է որ անհրաժեշտօրէն առաջ բերի քաղաքականութեան համապատասխան փոփոխութիւն։

«Նոր փաստը հանդիսանում է բուլգարների առաջխաղացումը դէպի Ադրիատիկ։ Բուլգարների ներկայութիւնը ծովափում իտալացիների համար անօգուտ կը դարձնի Վալօնի տիրապետութիւնը, որը, ինչպէս յայտնի է, գրաւել են իտալացիք։ Իսկ եթէ նոյն այդ ժամանակ Աւստրիան հասնի Չեռնօգօրիայի կենտրոնին և գրաւի Լօվչէն սարը, Իտալիայի կարևոր շահերը կը դրվեն սպառնալիքի տակ։ Այս ամենը, սակայն, իտալական շտաբը ի նկատի է առել։

«Այնուհետև իտալական քաղաքական գործիչները չեն հրաժարվում այն մտքից, որ Ռումինիայի և Բուլգարիայի միջև գոյութիւն ունի առանձին համաձայնութիւն։ Սրա համար քիչ ապացոյցներ չեն հաւաքված։ Ռումինիայի գործելակերպը այս ճգնաժամին նկատված է երկդիմանի. Ռումինիան եռանդուն հակառակ էր այն զիջումներին, որ Սերբիան պատրաստ էր անել Բուլգարիային յանուն հաշտութեան։

«Ռումինիան խօսում և անում էր գաղտնի կերպով այն, ինչ որ հարկաւոր էր անել, որպէսզի իր զօրահաւաքը Բուլգարիայի վերաբերմամբ նախազգուշութեան բնոյթ չը կրի։ Զը լինէր այդ, Ֆերդինանդ Թագաւորը չէր կարող Բուլգարիայի սահմանը յանաց կողմից թողնել այնպէս բոլորովին բաց։ Թիւրքերը ծեծում և արտաքսում էին յոյներին փոքր-ասիական ծովափից, բայց Ռումինիան հրաժարվեց բողոքելուց։ Բուլգարական մամուլը բարեկամութիւն է քարոզում Ռումինիայի վերաբերմամբ, իսկ դա բուլգարների համար չէ որ նշանակում է բոլորովին մոռացութեան տալ Կավալան։ Միևնոյն ժամանակ գերմանական մամուլը ոչ անհիմն կերպով պնդում է, որ այժմ կարելի է յոյս դնել Ռումինիայի վրա։ Յարաբերութիւնը Ռումինիայի և Բուլգարիայի միջև այժմ բարեկամական է այն չափով, որ Ֆերդինանդ Թագաւորի կառավարութիւնը թոյլատրել է Բուլգարիայից Ռումինիա տանել 1000 վագոն հաց։ Վերջ ի վերջոյ Կոնստանտին Թագաւորը վերցրեց դիմակը և պարզ կերպով սպառնում է Վենիզելօսին և նրա պարլամենտին, այն ժամանակ, երբ յոյն ժողովուրդը մնում է բարեացակամ դիտող իր Թագաւորի գործողութիւններին։ Վենիզելօսը, որպէս միջազգային քաղաքականութեան ֆակտոր, հաւասարեցված է ոչնչի։

«Սրանք են ահա այն հայեացքները, որոնք տարածված են Իտալիայում։ Իտալական զինուորական իշխանութիւնները իրանց կողմից ի նկատի են առել այս նոր հանգամանքները»։

ՄՈՒՇԻ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ*)

V

Անցնենք Տաւրոսեան լեռնաշղթայի ուռոյցքների վրա ապրող ու պատսպարվող միացած հայերի մասին ևս գրելու։ Ահա Բերդակայ-բուն կոչված սարը. ահա Անտոկ և բովանդակ Սասունը։ Ահռելի կոտորածից փախչող 5000-ի չափ հայեր ապաստանել են 60—70 մարտիկներից կազմված պատնէշի ետևում։ Երկու օրից յետոյ Սասունից գալիս է Փափազեանը և եղած մարդկանցով ժողով է անում, իրանց բռնելիք դիրքի մասին։ Ժողովականներից ոմանք, ի նկատի ունենալով իրանց ուժերի քչութիւնը, առաջարկում են խումբ-խումբ անցնել ռուսական սահմանը։ Սակայն մի մասը, նախագահի հետ միասին, որոշում է մինչև արեան վերջին կաթիլը կռուել։ Երկու օր այդտեղ կռուելուց յետոյ, որոշում են ժողովրդին անց կացնել Անտոկ. բայց որպէսզի թիւրքերն անկարող լինեն այդ գծից խուժելու դէպի Սասուն, Փափազեանը 60-ի չափ կռւողներով պահում է այդ գիծը։ Այդտեղից գնացող, ինչպէս նաև տեղացի սասունցիները—ադամարդիկ, կանայք և երեխաները—թւով հասնում են մօտ 30,000-ի. Անտոկի կռւողների թիւը 600-ից չի անցնում։ Մինչև յուլիսի 19-ը կռւում են։ Հէնց նոյն օրը սպանվում է հերոս Կորիւնը։ Եւ նոյն օրվայ երեկոյեան, Ռուբէնը յայտարարում է, որ այլևս դիմադրութիւնն անկարելի է. ով որ կարողանում է, թող իր գլուխն ազատէ։ Եւ այսպիսով՝ դիմադրութիւնն անհնարին է լինում։ Թէպէտ այդտեղ եղել են Մուշի և Սասունի փայլուն կռւողները, ինչպէս գուրանցի Տէր-Վարդանեան Արամը (սպանված), մշեցի Պօլէյեան Մկրտիչը (սպանված) և սասունցի մի քանի հին կռւողներից մնացածները։ Իսկ ընդհանուր առմամբ՝ կռւողների մեծամասնութիւնը գործին անտեղեակ մարդիկ են եղել։ Սասունի վրա գնացող քիւրդերի և թիւրքերի թիւը հասնում է 2000—3000-ի՝ 2 թնդանօթով։ Յուլիսի 20-ից սկսած, Անտոկն արդէն գրաւված է թիւրքերից և ժողովուրդը սրի քաշված։ Կռւողներից մի քանի հարիւր մարդ ազատվում է այդ տեղից և անցնում Տալւորիկի կողմերը։ Փախչողները թագստոցներից գիշերները դուրս են գալիս, ցանած արտերից ցորեն քաղում և տանում հաց պատրաստում։ Այն խմբերը, որոնք ունեցել են ճանապարհներին ծանօթ առաջնորդներ, փախել-անցել են ռուսական սահմանը։ Այսպէս, օգոստոսին անցնում է 74 հոգուց բաղկացած մի խումբ։ Մի քանի հոգի էլ Ռուբէնի ու Փափազեանի հետն են անցել։ 14 հոգի հ. Եղիշէի հետն են անցել։ Իսկ այժմ այնտեղ մնացածները հազիւ 1500 հոգի լինեն, եթէ մինչև օրս նրանք էլ չեն կոտորվել։

Ուշագրաւ է այն տեղեկութիւնը, որ Ս. Կարապետի վանքի անտառում բաւական թւով մարդիկ են եղել և որ դրանք պատրաստվել են անցնելու ռուսական սահմանը։ Սակայն մինչև օրս այնտեղի մարդկանցից այստեղ եկողներ չեն եղել։

Ահա համառօտ գծերով և Սասունի իսկական պատկերը։ Այս հերոս ցեղը, որ դարեր շարունակ իր գոյութիւնը պահպանեց գազան մահմեդականների մէջ, այժմ ամենակարճ ժամանակամիջոցում ջնջվեց։

Էջմիածին Տ. Թովմասեան

---

*) Տես «Մշակ» №№ 243, 244, 215 և 246.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Բաթումից, տ. Արուսեակ Մեղաւորեանից 25 րուբլի՝ երկու մատաղի համար։

ՑՈՒՑԱԿ

I

Կարզախ գիւղի նուիրատուների

(Յօգուտ հայ փախստականների)

(Տես «Մշակ» №№ 212 և 219)

Եղբ. Ս. և Ա. Արովեանցներ՝ 20 ր., Մ. ք. Արովեան 10 ր., Թ. և Փ. Աղապապեաններ 10 ր.։ Ընդամենը 40 ր., որպիսի գումարի կէսը, ըստ կարգադրութեան նուիրատուների, յանձնված է Տ. Նազարեանի ճաշարանին, իսկ միւս կէսը՝ Հ. Նպաստ. Ընկերութեանը։

II

Դաշնաւուլի նուիրատուների

(Յօգուտ Տ. Նազարեանի ճաշարանի)

(Տես «Մշակ» №№ 239 և 241)

Դ. Սարգսեանց 22 ր., Ե. Սաֆարեանց, Ե. Սաֆարեանց, Դ. Դաւթեանց, Ա. Բարամեանց, Գ. Յարութիւնեանց, Ա. և Ռ. Միրզայեանց, Մ. Գիւլնազարեանց, Ն. Օզբէկ 18-ական ր., Մ. Շաքարեանց 10 ր., Խ. Աբրահամեանց 4 ր.։ Ընդամենը 180 ր., որպիսի գումարից, ըստ ցուցման նուիրատուների, 100 ր. տրված է Կենտր. Կոմիտէտին, իսկ մնացեալ 80 ր.՝ Տ. Նազարեանի ճաշարանին։

ԴԻՏՈՒՄՆԱՒՈՐ ՍՈՒՏ ՄԸ

Մեզ հետ բոլոր ընթերցողները յուզումով կարդացին անշուշտ «Մշակի» № 240-ի մէջ արտատպուած բժիշկ Օհանջանեանի մէկ հեռագիրը, որով կը հաղորդուէր, թէ Վանի շրջանապետ պ. Տէրմէն Վան մեկնած էր զինուած ձիաւորներով և անոր կոչով ոգևորուած փախստականներն իրեն հետևած և Ապաղայի դաշտին մէջ քիւրդերու կողմէն յարձակման ենթարկուած էին, որու միջոցին սպաննուած էին մօտ 500 հայեր։

Կարծես այդ հեռագրին ի հաստատութիւն հոկտ. 22 և 23 թուակիր երկու թղթակցութիւններ երևցան տեղւոյս և Բագուի երկու հայ թերթերու մէջ, ուր միևնոյն լուրը կը պատմուէր աւելի դրամատիկ շեշտերով։

Անհամբեր՝ ժամ առաջ այդ խնդիրը ստուգելու համար կը դիմենք Թիֆլիսի զինուորական շտաբին, որ կը պատասխանէ, թէ այդ տեսակ լուր մը չէ ստացուած։ Նամակներ կը ստանանք Իգդիրէն և Երևանէն, որ կը հերքեն այդ լուրը. միևնոյնը կընեն եկող ճամբորդները։ Կը դիմենք տիկին Ա. Տէրմէնին, որ կը հաճի կարդալ պ. կառավարիչէն ստացուած նամակը, ուր ոչ մէկ ակնարկութիւն կայ այդ չարագուշակ լուրի մասին, մինչդեռ մոռցուած չէին ճանապարհի ամենափոքր մանրամասնութիւններն և պատահարներն իսկ։ Պ. Տէրմէն կը գրէ, թէ Կըզըլ-Դիզէն ճամբայ ելած էր հոկտ. 21-ին, այնպէս որ հոկտ. 22-ին, այսինքն վերոյիշեալ թղթակցութիւններու գրուած թուականին, ինքը հազիւ Ապաղայի դաշտը հասած պիտի ըլլար, ուր մնաց իր հետևորդները։ Իսկ որ իր խումբին վրայ ոևէ յարձակում չէ եղած, յայտնի է իր հոկտ. 25 թուակիր հեռագրէն, որով կիմացնէր, թէ առանց արկածի Վան հասած էր։ Նման հեռագիր մըն ալ ստացուած էր պ. Արմենակ Եկարեանէն, որ իր խումբին մէկ մասով պ. կառավարիչէն երկու օր յետոյ ճամբայ ելած էր։

Այս բոլորէն պարզապէս կը հետևի, որ հոկտ. 22-ին կամ անկէ առաջ տեղի չէ ունեցած այդ տեսակ դէպք մը, իսկ անկէ յետոյ ալ տեղի չէր կրնար ունենալ, որովհետև ծանօթ թղթակցութիւնը գրուած է հոկտ. 22 թուականին։ Կը մնայ մէկ եզրակացութիւն միայն։ Այն, որ այդ պարոնները թխած են հնարովի լուր մը, որոշ դիտաւորութեամբ, և կամ ոևէ կերպով լսուած տարտամ լուր մը ուռեցուցած, ահագին ողբերգութեան մը վերածած են, հասարակական կարծիքին վրայ մեծ, ցնցող տպաւորութիւն թողնելու համար, առանց հետաքրքրուելու թէ սուտ է այդ թէ ուղիղ։

Մեր այդ համոզման մէջ աւելի հաստատուեցանք, կարդալով տեղական թերթի մը մէջ խմբագրական մը, որու հիմը կը կազմէ այդ թխովի լուրը։ Թերթին փութկոտ խմբագրութիւնը երկինքէն շնորհուած անգին առիթ մը համարած է զայն՝ «տխմար և անհեռատես» անուանելու ինչ-որ «անպատասխանատու մարդիկ», որ իբր թէ պատճառ եղած են փախստականներու վերադարձին և այդ աղէտին հանդիպելուն։

Չենք գիտեր ովքե՛ր են այդ «անպատասխանատուները»։ Եթէ, ըստ բժիշկ Օհանջանեանի, պ. Տէրմէնի կոչէն քաջալերուելով է որ ժողովուրդը հետևած է անոր, ուրեմն նա պէտք է ըլլայ այդ «անպատասխանատուն». բայց այդ չըլլար, ի հարկէ։ Կը մնայ ենթադրել, թէ թերթին խմբագրութիւնը իր այդ ձևով արտայայտութեամբ «անպատասխանատու տխմարներ» կը յայտարարէ այն երկրապահ կամաւորները, որ Վան մեկնեցան իրենցմէ առաջ հոն հասած տասնեակ հազարաւոր հայ ժողովրդի կեանքը պաշտպանելու, ապրելու միջոցներ հայթայթելու, քաղաքը քանդուելէ ազատելու և կարգ ու կեդրոնացում ստեղծելու հօտանման բազմութեան մէջ։ Ասոնք և իրենց նիւթապէս և բարոյապէս օգնութեան փութացողները շինարարներ են, այո. բայց ոչ չակերտներով, ինչպէս ըրած է յիշեալ թերթը, տարուած «մի տխուր մրցակցութեան ցաւով», բան մը, որ ինք սակայն ուրիշներու կը վերագրէ։ Թէ ինչքան շատ չարակամութիւն և նոյնքան քիչ անկեղծութիւն կայ այդ ամբաստանութեան մէջ, ինքնին ակներև կը դառնայ, երբ մտաբերենք թէ այդ մարդիկ ասկէ առաջ վերադարձներ կազմակերպեցին դէպի երկիրը, և այս անգամին ալ ամբողջ հոգիով կը փափաքէին այդ միևնոյն «անհեռատեսութեան և տխմարութեան գագաթնակէտը» բարձրանալ...։

Չարամտութեան մէկ ապացոյցն ալ այն ձգտումն է, որով կուզուի պատասխանատու մը գտնել փախստականներու վերադարձին։ Նախ՝ պ. Տէրմէն ժողովուրդին կոչ չէ ուղղած երկիրը վերադառնալու համար և մասնաւորաբար կրկին և կրկին ազդարարած է, որ ընտանիքները չվերադառնան, իսկ իր հետ գալ փափագողներուն յայտարարած էր, որ յոյս չդնեն Վանի մէջ ուտելիք գտնելու վրայ, այլ իրենց պէտք եղած պաշարը հետերնին վերցնեն։ Ու այնպիսի մի պայման էր արդէն, որ բոլորովին կը սահմանափակէր վերադարձողներու թիւը։ Միևնոյն յայտարարութիւնը ըրած էր մունետիկի միջոցով Իգդիրի մէջ իր մեկնելէն մէկ օր առաջ (հոկտ. 17) և մասնաւորապէս ընտանիքներու վերադարձը խստիւ արգիլած էր։ Ո՛ւր մնաց ուրեմն «շրջանապետի կոչով ոգևորուելու» պարագան։ Կամաւոր երկրապահներն ալ զինուորներէ զատ ոչ մէկը չեն հրաւիրած հետերնին երթալու, չեն քաջալերած անզէն, ահագին խումբերով վերադառնալու՝ վտանգներով լեցուն երկիր մը, այնպիսի ճամբայէ մը, որու փակուած ըլլալն արդէն օրերէ ի վեր ազդարարուած էր ժողովուրդին։ Ընդհակառակն՝ միշտ յորդորած են ժողովուրդին չվերադառնալ, մանաւանդ Բերկրիի ճանապարհով։

Հակառակ ատոր՝ սակայն՝ ժողովուրդը կը վերադառնայ, սոված, մերկ և ուժասպառ։ Հիւանդ կիներ նիհար, ուժաթափ զաւակները կռնակնին առած կամ ձեռքերնէն բռնած, ոտքով ճամբայ կիյնան դէպի երկիր։ Գիշերները բացօթեայ պառկելով մերկ գետնին վրայ, ձմեռնային ցուրտի մը մէջ, անօթի և անխնամ՝ Գաղթի սարսափները կը կրկնուին։ «Աւելի լաւ կը համարինք երթալ մեր երկիրը մեռնիլ, քան թէ կոպէկ մը նպաստ ստանալ, հետն ալ ապտակ մը» կըսեն վերադարձողները։

Այո, պատասխանատու մը պէտք է փնտռել այս բոլորին, բայց այդ ոչ պ. Տէրմէնն է և ոչ կամաւորները։ Պատասխանատուն Եղբայրական Օգնութիւնն և իր մասնաճիւղերն են, որովհետև վերադարձողներու մեծ մասն անցագիրներ ունին ձեռքերնին, որ ստացած են Իգդիրէն, Էջմիածնէն կամ Երևանէն։ Որովհետև Իգդիրի մասնաճիւղը պէտք էր վերադարձողներուն հասկցնէր իրենց դրութիւնը և անսաստողները նոյն իսկ բանի միջոցներով ետ դարձնէր։ Եւ երբ այսպէս թէ այնպէս փախստականները ճամբայ ելան, ինչ ըրաւ Եղբայրական Օգնութիւնը ճանապարհին անոնց կրած անծայր տառապանքներուն դարման մը տանելու համար. բացարձակապէս ոչինչ։ Կերևի թէ իր պարտականութեան սահմանէն դուրս համարեց այդ բանը. որքան կըլլար ուրեմն այդ պարտականութիւնը։

Այդ պարտականութիւնը կը ծանրանար նաև բժիշկ պ. Օհանջանեանին, որ միտումնաւոր հեռագիրներ տալէ աւելի կարևոր գործ ունէր կատարելու։ Երբ կառավարիչը, յուզուած՝ փախստականներու թշուառութենէն, կը դիմէ Համառուսական Քաղաքներու Միութեան, որպէսզի սննդատու կայաններ հաստատուին ճամբուն վրայ և հիւանդանոց Վանի մէջ, Միութիւնը կընդունի այդ առաջարկը և այդ նպատակով յանձնախումբ մը կը կազմէ պ. Օհանջանեանի ղեկավարութեամբ Վան երթալու համար։ Բայց պ. Օհանջանեան կը մերժէ ճամբայ ելնել հնարովի լուր մը պատրուակ բռնելով և կը թողնէ, որ վերադարձող փախստականները բոլորովին անօգնական՝ ճանճերու պէս կոտորուին քաղցէ և թշուառութենէ։

Իսկ որ իսկական պատասխանատուները ուրիշներ կամբաստանեն՝ բնաւ զարմանալի չէ։ Չէ որ գողին տանտէրը բռնելու առակը հայկական ծագում ունի։

Ահա թէ ինչ աղբիւրէ բղխած է Ապաղայի կոտորածի զգայացունց լուրը, որ տրուած է ոչ իրողութիւն մը յայտնելու, այլ յարձակումի առիթ ստեղծելու համար՝ այնպիսի մարդոց հանդէպ, որոնց յանցանքը իրենց ուժերու ներած սահմանին մէջ հայրենիքի վերաշինութեան գործին ծառայելն է միայն։

Իրազեկ

ՍՓՈՓԵՆՔ ՈՐԲԵՐԸ

Մեր ցեղին անլուր հալածանքներն ու տառապանքները մեզի հազար ու մէկ վէրքեր տուին, առաւել կամ նուազ կսկծալի։ Ներկայ հարիւրաւոր որբերը, անտէր ու անտիրական, մեր սրտին վրայ բացուած ամենախոր վէրքերէն են։

Որքան դժբաղդ են այդ հէք փոքրիկները, իրենց խաղաղ օրրանէն խլուած ու կատաղօրէն դուրս շպրտուած և մատնուած անողոք բաղդին...։ Անոնք մեր բնաշխարհը փոթորկող ու հիմնայատակ ընող ալեկոծութենէն հազիւ ճողոպրած՝ ահա այսօր կանգնած են մեր առջև անօթի ու ծարաւ, մերկ և հիւանդ։ Դեռ երէկ իրենց մանկական յոյսերու և երազներու աշխարհին մէջ անհոգ ու երջանիկ ճռուողելով կը մեծնային։ Այսօր, ամենազարհուրելի չարիքներու ենթակայ, մահուան դուռներուն առջև կը դեգերին։ Հէք քնքոյշ հայ մանուկներ. դեռ օրօրոցէն, ձեր մանկական առաջին քայլերէն սարսռած էք մեր տարաբաղդ և հալածական ցեղին սարսափներն ու արհաւիրքները ճաշակելէ։ Ո՛վ գիտէ իրենց այս ալեկոծ թափառումներուն մէջ որքան վրդոված են անոնց հոգիները, և որքան դառնացած են կեանքէն ու աշխարհէն։ Անոնց տեսած աղէտներն ու հալածանքներ իրենց փոքրիկ հոգիներուն խորը պիտի արձակեն ծիլեր անէծքի և նզովքի, վրէժի և ատելութեան՝ հանդէպ մեր դարաւոր այնքան անարգ թշնամիներուն։

Մեր որբերը մեր այս տառապանքի օրերուն մեզ հետ կը բաժնեն մեր ցաւն ու կսկիծը։ Այսօր անոնց դառնացած սրտերը ամենէ աւելի սփոփանքի և գորովի կարօտ են։ Անոնց ծնողներն ինկան սուրի ու կրակի մէջ իրենց աչքերուն առջև, որով այդ խեղճերը արհաւիրքներուն ամենադժոխայինն էր որ տեսան։ Ու այդ բաւական չէր կարծես, այսօր ահա հաց չունին ուտելու, հագուստ չունին իրենց մերկութիւնը ծածկելու, ոչ ալ տուն՝ պատսպարուելու։

Ոչ, կարելի չէ մեր թշուառութեան բեկորները այդպէս լքել։ Մեր վրա հրամայական պարտականութիւն կը ծանրանայ օգնութեան ձեռք կարկառել անոնց շուտափոյթ, խնամել ու պատսպարել զանոնք և սփոփել լայնօրէն անոնց խորին վէրքերը։ Պէտք է փարատենք անոնց հոգիներուն խորը սևաւոր արհաւիրքը, տալով անոնց հարկ եղած հանգստաւէտ մթնոլորտը, ուր շարունակեն մեծնալ անհոգ ու անվիշտ ինչպէս սովորական երախաները։ Պէտք է փոխարինենք անոնց ծնողներուն գորովն ու ժպիտը։ Բայց մեր պարտականութիւնը անոնց հանդէպ պէտք է ալ աւելի հեռուն երթայ, որ և պէտք չէ միայն կանգ առնէ զանոնք խնամելուն և պատսպարելուն մէջ։ Մասնաւոր հոգածութեամբ ու գուրգուրանքով պէտք է խնամք տանինք անոնց ուսման, անոնց մտաւոր և բարոյական դաստիարակութեան և զարգացման. ահա մեր նուիրական պարտականութիւնը։

Անոնք միանգամայն վաղուան հայերն ու մեր յոյսերն են։ Պէտք չենք լքել մեր տառապանքին այդ հէք և ազազուն ծաղիկները, մեր արիւնոտ հայրենիքին այդ թշուառ բեկորները։ Պէտք է գիտակից ըլլանք մեր բարոյական բարձր պարտականութեանց։ Զանոնք լքելով ամենամեծ անպատուութիւնը և բարոյական ոճիրը գործած պիտի ըլլայինք, որուն ամօթը պիտի խարանուէր ազգին ճակատին։

Այս կենսական հարցին համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք, սկսելով Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, Կովկասի Հայ Բարեգ. Ընկերութենէն, բոլոր մեր բարեգործական և կուլտուրական մարմիններու, որպէսզի անյապաղ գործի սկսին։

Լօզան Դոքտ. Գ. Ամատունի

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Վերջերս հեռագիրներից տեղեկացանք, որ հոկտ. 26-ի Բարձրագոյն ռէսկրիպտով Ալէքսանդր I-ի ժամանակ հաստատված «հողաշինութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը» վերածված է «երկրագործական մինիստրութեան»։

Մինիստրութիւնները Ռուսաստանում 1803 թ. բարեկարգութիւնից յետոյ կազմվել են թւով 9-ը (պալատի, ներքին և արտաքին գործերի, զինուորական, լուսաւորութեան, ֆինանսների, արդարադատութեան, հաղորդակցութեան և առևտրի ու արդիւնաբերութեան)։ Սկզբներում կարևոր նշանակութիւն չէր տրվում երկրի գիւղատնտեսականին և այդ պատճառով կազմվել էր «հողաշինութեան և երկրագ. գլխ. վարչութիւնը», որ մի ժամանակ համարվում էր ներքին գործերի մինիստրութեան մի դեպարտամենտը, ինչպէս որ այժմ փոստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը համարվում է ներքին գործերի մինիստրութեան ենթակայ մի դեպարտամենտը։ Հաւանօրէն կը գայ մի օր, երբ անհրաժեշտ կը համարվի նոյնպէս և փոստ-հեռագրական գլխ. վարչութիւնը անջատել ներքին գործերի մինիստրութիւնից, դարձնելով առանձին մինիստրութիւն։

Տարօրինակ է, կարծես, որ գերազանցօրէն երկրագործական մի երկիր, ինչպիսին է Ռուսաստանը, որի ազգաբնակութեան 87 %-ը*) գիւղատնտեսութեամբ է պարապում, չէ ունեցել երկրագործական յատուկ մինիստրութիւն, այլ միայն գլխաւոր վարչութիւն։ Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ էականը և կարևորը անունը չէ, այլ էութիւնը. ցուցանակը չէ գործի, այլ նրա բովանդակութիւնը։ Հողաշինութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը վերջին ժամանակներս եղել է համազօր մինիստրութեան և ամենքից ճանաչվել է որպէս de facto մինիստրութիւն, միայն ուրիշ անուան տակ. այդպէս՝ «հողաշինութեան և երկրագործական գլխաւոր վարչութեան» պետը համահաւասար իրաւունքներով էր օժտված, ինչպէս և միւս մինիստրութիւնները. մասնակցում էր մինիստրական խորհուրդներին, իրաւունք ունէր անմիջական զեկուցումներ անելու Կայսրին և այլն։

Բայց պարզ է, որ այժմ մինիստրութեան վերածվելով նախկին «հ. և եր. գլխ. վարչութիւնը» ուժեղանալու է պաշտօնեաների անձնախմբով, բիւջէով և գործունէութեան ընդարձակութեամբ։ Դեռ հանգուցեալ Պ. Ա. Ստոլիպինն էր ծրագրել այդ բանը, որ միայն այսօր է իրագործվում։

Բայց հեռագիրը միաժամանակ և հաղորդեց, որ հիւանդութեան պատճառով և իր խնդրի համաձայն պաշտօնից արձակվում է «հող. և երկ. գլխ. վարչութեան» պետ Ա. Վ. Կրիվօշէինը։ Նրա հրաժարականն էր, որ բոլորովին անսպասելի էր մեզ համար. ընթերցողները անշուշտ յիշում են, որ կամս Կոկօվցեվից յետոյ, երբ պրէմիէրութիւնը անցաւ Գորեմըկինին, մինչև վերջին ժամանակներս պարբերական լուրեր էին պտտում, ամենահաւատարի աղբիւրներից հաղորդվում էին, որ պ. Կրիվօշէինը կարգվելու է պրէմիէր. այդ լուրերն աւելի ուժեղացան անցեալ ամառ, երբ Պետ. Դումայում խօսվեց երկրի վստահութիւնը վայելող մինիստրութեան մասին։ Սեպտեմբերի սկզբին, երբ Պետ. Դումայի աշխատանքների ընդհատումով կազմվեց պրոգրեսիվ բլոկը, նա իր ցուցակի մէջ էր մտցրել և Ա. Վ. Կրիվօշէինին, թողնելով նրան իր պաշտօնում։ Եւ նա վերջերս թողեց իր պաշտօնը։

Այսօր մենք մտադիր չենք պ. Կրիվօշէինի 7-ամեայ գործունէութեան գնահատութիւնը տալ. կը բաւականանանք միայն յիշելով, որ նա ներկայանում էր հանգուցեալ Ստոլիպինի գործակիցը և նրա քաղաքականութեան հետևողը. սկիզբը դրեց խուտորական մանր երկրագործական բաժինների ծրագրի իրագործմանը. մեզ մօտ, Կովկասում, Մուղանի անապատի ոռոգումով հնարաւոր դարձաւ այն բնակեցնել Ռուսաստանի միջին նահանգներից գաղթեցվածներով, և այլն։

Գ.

ՀԱՅ ՆՊԱՍՏ. ԸՆԿ. ՈՐԲԱՆՈՑԻ ՄԷՋ

Վերայի կողմը, Զիլինգարեանի ծառազարդ և ստուերախիտ այգիի մէջի ընդարձակ և երկյարկանի գեղեցիկ շէնքի մէջն է Նպաստամատոյց Ընկ. որբանոցը, ուր կը գտնուին 12 տարեկանէն վար՝ 120 գաղթական որբեր, Թիւրքիայի զանազան գաւառներէն։ Որբանոցի ընդհ. կառավարութեան գործը պ. Ստ. Մալխասեանցին յանձնուած է։ Որբանոցի մէջ կան նաև ուրիշ 6 պաշտօնեաներ, որոնցմէ իւրաքանչիւրին յանձնված է իրեն յատուկ գործ մը։

Որբերը հագած են համազգեստ և բոլորն ալ մաքուր ու կոկիկ արտաքին մը ունին։ Անոնք ուրախ զուարթ թռչկոտելով կերգէին ու կը խաղային։ Բոլորի դէմքի վրայ ալ գոհունակութեան ուրախ ժպիտ մը կը փայլէր։

---

*) Ըստ Փօրտուգալովի 1914 թւի տուեալների։

Ննջարանները շատ մաքուր և ճաշակաւոր կահաւորուած են, անկողինները նոյնպէս մաքուր և նոր են։ Որբերու մեծ մասը մահճակալներու վրայ կը պառկին։

Որբերուն առաւօտեան կը տրուի թէյ, հաց՝ պանիրի հետ, ժամը 12-ին հաց կարտոֆիլի հետ, ժամը 4-ին մսեղէն կամ բուսեղէն կերակուր, իսկ երեկոյեան թէյ և հաց։ Իւրաքանչիւր որբն ունի իր յատուկ երեսսրբիչը, թաշկինակը, ինչպէս նաև կերակուրի պնակ գդալը և թէյի բաժակը։

Կրթուած և փորձառու վարժուհի մը ցերեկները որբերուն ընթերցանութիւն կընէ և երգեր կը սորվեցնէ։

Որբերուն ուսում տալու համար վարձուած է գաղթական ուսուցիչ մը։ Դասաւանդութիւնը կը սկսի նոյեմբերի սկիզբներուն։

Որբ աղջիկները ձեռագործով կը զբաղին։ Պաշտօնեաներու սիրալիր և քաղցր յարաբերութիւնը որբերու հետ՝ ամենէն տպաւորիչ ու մխիթարական երևոյթը եղաւ ինձ համար։ Երբեմնի շէն ու հարուստ օջախներու և երջանիկ ընտանիքներու այս թշուառ մնացորդներու վրայ նայելով մարդու սիրտը կը մղկտայ և աչքերը կը լեցուին արցունքով։ Ինծի ծանօթ, երջանիկ ու բազմանդամ ընտանիքէ մը միայն երկու փոքրիկ որբուկներ մնացեր էին։ Անոնք ծառի մը տակ նստած, գլուխ-գլխի տուած մելամաղձիկ եղանակով մը կերգէին…

Ուրախ ու ժպտադէմ որբուկներու այցելութենէն զգացած քաղցր ու յիշատակալից տպաւորութեամբ մեկնեցայ որբանոցէն։

Հ. Աճէմեան

ԼԵՒ ՏՈԼՍՏՈՅԻ ՄԱՀՎԱՆ Զ-ԱՄԵԱԿԸ

Այսօր, նոյեմբերի 7-ին, լրանում է մեծ արտիստի և «Ռուսաստանի խղճի»՝ Լև Նիկոլայեվիչ Տոլստոյի մահվան Զ-ամեակը։

Այժմ աւելի, քան երբևիցէ, զգացվում է հանճարեղ գրողի քարոզած եղբայրասիրութեան անհրաժեշտութիւնը։

Այժմ, երբ բովանդակ աշխարհը թնդում է թնդանօթների որոտից, երբ օդը լցվել է արեան հոտով և հողը տակաւին չի յագենում արեան ծծելուց, այժմ աւելի, քան երբևիցէ, մարդկութիւնը կարօտ է Տոլստոյի սփոփիչ վարդապետութեան։

Իր մեծ հոգու կանխատես աչքով Տոլստոյը նկատել էր, որ մարդկութեան մէջ հետզհետէ աճում և զարգանում է ատելութեան, չարութեան և քինախնդրութեան տենդ ոգին, և դրա համար նա եռանդով ու մեծ ոգևորութեամբ սկսեց վերարծարծել և քարոզել իր գրուածքներով Քրիստոսի վարդապետութիւնը՝

— Սիրեցէք միմեանց…

Չը լինէր պատերազմը, Տոլստոյի մահվան այս Զ-ամեակը անպայման կը տօնվէր մեծ շուքով և աշխարհի բոլոր մասերը նորից կը զբաղվէին մեծ մարդու մեծ գործերով։

Բայց ինչ էլ լինի՝ մեծութիւնը կը մնայ մեծութիւն և Տոլստոյի վարդապետութիւնը անմեռ։

Յարգանք նրա յիշատակին։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ներսէս եպիսկոպոսը Ջուլֆայից հեռագրում է Քաղ. Միութեան կովկասեան կոմիտէի լիազօրին, որ Սալմաստի շրջանում կենտրոնացված է մօտ 2000 փախստական Թիւրքահայաստանից — հայեր ու ասորիներ։ Ամսական անհրաժեշտ է 60,000 րուբլի, օրական 10 կոպէկ բաժանելու իւրաքանչիւրին։ Էջմիածնի կոմիտէն ուղարկել է 30,000 ր.։ Սովից խուսափելու համար՝ կոմիտէը խնդրում է ուղարկել նաև 30,000 րուբլի։

— Քաղ. Միութեան կովկասեան ճիւղը պատուէր է տուել փախստականների համար պատրաստել 200,000 կտոր տաք զգեստ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Տեղեկութիւններ գիւղից

Ծաղրուտ (Ախալց. գաւ.), 24 հոկտ.

Ախալցխայի գաւառում գտնվում են ամեն մեծ ու փոքր հայկական գիւղեր (լուսաւորչական), որոնց մէջ իրանց մեծութեամբ և առաջադիմութեամբ առաջին տեղն են բռնում Ծաղրուտը և Տամալան։ Նախ կը խօսեմ Տամալայի մասին։

Տամալան գտնվում է Ախալցխայի արևելեան ծայրագաւառում, կից Ախալքալաքի սահմանին, խճուղու ճանապարհից 3 վերստ հեռաւորութեան վրա։ Գիւղը բաղկացած է 120 տնից, մօտ 1200 բնակչով, որոնց գլխաւոր պարապմունքն է հողագործութիւնը և անասնապահութիւնը։ Տնտեսական տեսակէտից այնքան էլ նախանձելի չեն շնորհիւ իրանց թմրութեան։ Կլիման մեղմ է, օդը վճիտ առողջարար. գիւղը երեք կողմից շրջապատված է անտառներով, հողը շատ սակաւ է, բայց պատկանում է պտղատու հողերի առաջին կարգին և ջրարբի է. գիւղն ունի մաքուր և առողջարար ջրեր, որոնցով ջրվում են արտերը. իսկ գիւղացիների խմած ջրերը աղբիւրի են և ոչ առողջարար, որից մշտապէս հիւանդանում են ջերմատենդով։ Գիւղը ունի միդասեան ծխական դպրոց, որը գլխաւորապէս պահվում է Կ. Հ. Բ. Ընկեր. խորհրդից տրված տարեկան 200 ր. նպաստով։ Բայց դպրոցը այնքան էլ օգտաւէտ չէ շնորհիւ անձեռնհաս հոգաբարձուների, որոնք ընտրվում են մշտապէս խնամէական հողի վրա (չը նայած որ կան կարող ույժեր), բացառութեամբ երկարամեայ պաշտօնավարող մի հոգաբարձուի, որի շնորհիւն է, որ այսքան տարի գոյութիւն ունի Տամալայի դպրոցը։

Գիւղացիք երկրագործութիւնը առաջ են տանում իրանց պապերի կտակած արօր ու գութանով, որի համար և տուժում են։ Գիւղն ունի բնութիւնից տրված մի քանի առաւելութիւններ, որոնցից մինչև օրս չէ մտածել գիւղացին օգտվել։ Բացի գիւղի նաղել արօտատեղերից, Տամալայի արքունական անտառը տարեկան չնչին կոպալով դրված է գիւղացոց տրամադրութեան տակ, որը գիւղացուն մեծ շահ կարող է տալ, եթէ պահին ազնիւ տեսակի կթնատու անասուններ. ունեցածները վատից վատն են։ Գիւղը իր անտառով միասին աչքի է ընկնում ճոխ բուսականութեամբ և ծաղիկներով, որտեղ կարելի է պահել ոչ պակաս քան 2—3000 փեթակ, որը կը լինի գիւղացու առաջնակարգ եկամտի աղբիւրներից մէկը։ Տամալան մեղուապահութեան տեսակէտից Ախալցխայի շրջանում առաջին տեղն է բռնում, բայց պահում են քիչ քանակութեամբ փեթակներ, մօտ 300 հատ, այն էլ Նոյի տարվայ մնացած քութուկներով. միայն վերջին տարիները մի քանի հատ ձեռք են բերել շրջանակաւոր Դադանի փեթակներ։

Փոքր տարածութեամբ ունեն պտղատու այգիներ, որոնց ծառերն են տեղական սոպան ու մաժուլան, շաղկամի ու սիւտալման, որոնք չեն կարող մրցել շուկայում ռուսականի և եւրոպականի դէմ։

Շնորհիւ այդ յարմարութիւնների, լաւ կը լինի որ տամալացիները բանային ամառվայ դասընթացքներ յիշեալ արդիւնաւէտ ճիւղերի համար, հրաւիրելով մասնագէտ գիւղատնտես ուսուցիչներ։

Ս. Քհ. Տէր-Յակոբեանց

Առողջացած թիւրք գերիներ

Ալէքսանդրոպոլ, 3 նոյեմ.

Ամսիս 2-ին 75 թիւրք գերի ասկեար բերին և տարան դէպի ճանապարհների շինութեան։ Հիւանդանոցներում վեց-եօթն ամսից ի վեր բուժված ասկեարները, որոնք գերի էին ընկած ձեռքից, ոտքից ցրտահար, այժմ առողջացած են, մաս-մաս ուղարկվում են ներքին նահանգները։ Այդ առողջացածները անթաւ գոհունակութիւն յայտնեցին իրանց վրա դրված խնամքի մասին, որ բոլորովին մարդասիրաբար նրանց խնամել են բժիշկները, մանաւանդ հիւանդանոցի քոյրերը։ Զինուորներն արաբներ, սիրիացիներ էին, որոնք Ալաշկերտում գերի էին ընկած մարտին։

Ատրպետ

Հայ աղէտի արձագանքը

Եւպատորիա, 26 հոկտ.

Ռուս-թիւրքական պատերազմի սկսվելուց ի վեր Եւպատորիայում կազմակերպված է հայկական կոմիտէ, որը մինչև օրս գործում է, ամեն ամիս նուիրատւութիւններ հաւաքելով և ուղարկելով յօգուտ փախստականների և հայ կամաւորների։

Նորերս կազմակերպվեց նաև կանանց և օրիորդաց կոմիտէ։ Յիշեալ կոմիտէն կազմակերպվեց յարգելի տիկ. Յուլիանէ Սալէնդիլարեանի ձեռքով, որը յատկապէս այդ գործի համար գալով Եւպատորիա հոկտ. 15-ին տեղիս հայ տիկնանց և օրիորդաց ժողովում սրտաշարժ բանախօսութեամբ նկարագրեց փախստական որբ հայ մանուկների աղքալի կացութիւնը և յորդոր կարդաց տեղիս հայ կանանց և օրիորդներին՝ կազմակերպվել և անմիջական օգնութիւն հասցնել։ Դրա համար տիկինը հիմնելու է Թիֆլիսում «Ղրիմի հայ կանանց և օրիորդաց» անուան մի որբանոց 40—50 փախստական որբ հայ երեխաների համար, որի ծախսը հոգալու են Ղրիմի քաղաքների հայ կանանց և օրիորդաց կոմիտէները, որոնց կենտրոնականը լինելու է Սիմֆերոպոլին։ Վերջինիս կոմիտէում հաւաքվելու են բոլոր դրամները և ուղարկվելու Թիֆլիս։ Նուիրատւութիւնները լինելու են միանուագ և ամսական։ Ամսականները գանձվելու են մինչև պատերազմի վերջ և աւելի էլ, եթէ հարկը պահանջէ։

Յարգելի տիկնոջ առաջարկութիւնը մեծ ոգևորութիւն առաջ բերեց ներկայ եղողների մէջ, որոնք անմիջապէս գրվեցին որը միանուագ և որը ամսական։

Նոյն երեկոյ ընտրվեց նաև կոմիտէ բաղկացած 7 հոգուց, որը ամեն ամիս պիտի գանձէ դրամները և ուղարկէ Սիմֆերոպոլ։

Սիմֆերոպոլից եկած, տիկ. Սալէնդիլարեանի հետ, այնտեղի հասարակական գործիչ տիկին Կատարինէ Ալեքսանեանը տուեց մի քանի տեղեկութիւններ իրանց կատարած ժողովարարութեան մասին։ Պարզվեց, որ Սիմֆերոպոլում մինչև հոկտ. 15-ը հաւաքվել է միանուագ 7—800 ր. և ամսական մօտ 200 ր.։

Եւպատորիայի հայ կանայք և օրիորդները նոյն երեկոյ և յաջորդ օրը հաւաքեցին 94 ր. միանուագ և ամսական 75 ր. 50 կ., որը պիտի ուղարկվի Սիմֆերոպոլ։

Յարգելի տիկնոջ ձեռնարկութիւնն անշուշտ ամենայն գովասանքի և խրախուսանքի է արժանի։

Յայտնելով մեր խորին համակրութիւնը յարգելի տիկնոջը՝ ցանկանք կատարեալ աջողութիւն ի կատար ածելու իր բարի ձեռնարկութիւնը։

Կ. Քհ. Թումանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ, Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի ծննդեան օրը, զինուորական տաճարում կատարվեց պատարագից յետոյ գոհաբանական մաղթանք։

◆ Նոյեմբերի 5-ին Մեծ Իշխան Փոխարքային ներկայացաւ էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը։

◆ Այսօր Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը մեկնում է Պետրոգրադ՝ ռուսաց սինոդի ձմերային նստաշրջանին մասնակցելու։ Էկզարխի մեկնելու առիթով երէկ Քաշվէթի եկեղեցում ողջերթի մաղթանք կատարվեց։

◆ Որովհետև այս ամսի վերջին լրանում է տարին այն օրից, երբ երկաթուղով տեղափոխվող ապրանքների վրա ժամանակաւոր տուրք նշանակվեց, այդ պատճառով բորսային առևտրի և գիւղատնտեսութեան ներկայացուցիչների համագումարների խորհուրդը դիմել է Թիֆլիսի բորսային կոմիտէին, խնդրելով յայտնել այդ տուրքի գործողութիւնը մինչև երբ տևելու մասին։

◆ Նոյեմբերի 14-ին կը կայանայ Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղի անդամների ժողովը, որին ներկայ լինելու համար Թիֆլիս են գալու Անդրկովկասի և Հիւսիսային Կովկասի քաղաքների քաղաքագլուխները։ Այդ նիստում, ի միջի այլոց, Միութեան ճիւղի անդամներից ընտրվելու է վերստուգիչ յանձնաժողով։ Ընտրվելու են այն անդամները, որոնք Միութեան բիւրոյի գործերին չեն մասնակցում, և դրանց գործը պէտք է լինի վերստուգել բիւրոյի հաշիւները։

◆ Մի քանի օր առաջ էլեքտրաքարշի ծառայողները կեանքի թանգութեան պատճառով անօնիմ ընկերութեանը առաջարկել էին մի շարք պահանջներ, իսկ մինչև դրանց բաւարարելը՝ դադարեցրել էին աշխատանքը։ Այժմ ընկերութիւնը բաւարարել է բոլոր պահանջները, և ծառայողները նորից ձեռնարկել են գործի։

◆ Մինչև անցած հոկտեմբերի 1-ը քաղ. վարչութեան գանձարան է մտել գնահատական տուրքից 915,834 ր.։ Անցեալ տարի նոյն այդ ժամանակամիջոցում ստացվել էր ընդամենը 723,948 ր., ուրեմն գրեթէ 200,000 ր. պակաս ներկայ տարվանից։

◆ Քաղաք. Միութիւնը առաջարկել է Հայոց Գիւղատնտ. Ընկ. իր վրա վերցնել 10,000 հատ տաք գուլպայ պատրաստելու գործը։

◆ Ժողովրդական համալսարանների ընկ. վարչութիւնը իր միջոցները աւելացնելու համար կիրակի, նոյեմբ. 8-ին, կազմակերպում է գրական-երաժշտական առաւօտ։ Սկիզբը առաւօտեան ժամը $11^{1}/_{2}$-ին։

◆ Նոյեմբերի 8-ին կը կայանայ Թիֆլիսի Կոոպերատիվ Ընկ. անդամների երկրորդ ընդհանուր ժողովը, որտեղ ընտրվելու է Ընկ. վարչութիւն և վերստուգող յանձնաժողով։

◆ Երէկ, ուրբաթ, ցերեկվայ ժամը 1-ին Տ. Նազարեանի ապաստարան-ճաշարանում տեղի ունեցաւ փախստական ծնողների մի նորածին զաւակի մկրտութիւնը։ Մկրտութեան հաւաքվել էր թէ փախստականներից և թէ տեղացիներից բաւական շատ բազմութիւն։ Մկրտութեան կարգը կատարեց Ծաղրուեան քահանան, իսկ կնքահայրն էր Նպաստամատոյց Ընկ. ներկայացուցիչը, որ յայտնեց, թէ Նպաստամատոյց Ընկերութիւնը իր վրա է վերցնում նորածնի դաստիարակութիւնը։ Նորածինը կոչվեց Նիկողայոս ի պատիւ Փոխարքայ և Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի ծննդեան տարեդարձի։

◆ Մեզ խնդրում են ասել, որ յօգուտ գաղթականների հոկտ. 25-ին հանդիսակութեան մասնակցողները հրաւիրվում են այսօր, շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին առաջնորդարան ելքերի և դրամների հաշիւը տեսնելու և կարգադրութիւն անելու։

◆ Նոյեմբերի 4-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր 32 վագոն, եգիպտացորեն 26 վ., լոբի 1 վ., միրգ 5 վ., գարի 2 վ., և գինի 1 վագոն։

◆ Նոյեմբերի 8-ին, երկրագործութեան դեպարտամենտի Կովկասի գլխաւոր լիազօր Շալկովսկու նախագահութեամբ կը կայանայ մի խորհրդակցութիւն, մասնակցութեամբ հասարակական և պետական հիմնարկութիւնների ու հաստատութիւնների ներկայացուցիչների, որտեղ վճռվելու է քաղաքին 3 միլիոն փոխառութիւն տալու հարցը։

◆ Երէկ Պետրոգրադից Թիֆլիս եկաւ այնտեղի կոմիտէի լիազօր Տիգրանեանը։ Նրա ասելով Պետրոգրադի հայկական կոմիտէը Ատրպատական է ուղարկում մի սննդատու-սանիտարական խումբ։ Այդ առիթով Տիգրանեանը խնդրում է Քաղ. Միութեան կովկասեան ճիւղի լիազօրին, Միութեան այդ շրջանում ունեցած գործունէութիւնը համաձայնեցնել այդ խմբի հետ։

◆ Քաղ. Միութիւնը Դիլման է ուղարկում բժ. Յովհաննիսեանին և 3 ֆելդշէր այնտեղ բացված նոր հիւանդանոցի համար։

◆ Գեն. Բերնով խնդրում է Քաղ. Միութեան Ալեքսանդրոպոլի հիւանդանոցին տալ 30,000 ր. ձմերային ծախքերի համար։

◆ Խմբագրութիւնս ստացաւ Անտոն Մայիլեանի խմբագրութեամբ Բագւում հրատարակվող «Թատրոն և Երաժշտութիւն» հանդէսի այս տարվայ № 8—9 համարները՝ յուլիս—հոկտեմբեր։ Հանդէսի մէջ կայ նորերս վախճանված դերասանուհի Ադամեանի պատկերը և երկու յօդուած հանգուցեալին նուիրված։ Յօդուածների թւում է Ա. Մայիլեանի դասախօսութեան նկարագրութիւնը, որ կարդացել է նա Շամախու թեմի հայ ուսուցիչների համագումարում։ Այս հրատարակութեան մէջ տպված է նաև Պետ. Ադամեանի նամակների շարունակութիւնը։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Մոսկվայի լրագիրները յայտնում են. «Իշխանութեան ներկայացուցիչներից մինը կենտրոնական կոոպերատիվ կոմիտէի գործունէութեան առիթով յայտնել է, որ նրանից յետոյ, երբ իշխանութեան համար ապացուցված էր կազմակերպութիւնների մտադրութիւնը՝ վերածել կոմիտէը համակոոպերատիվ միութեան, որի գործունէութիւնը պէտք է ընթանայ զեմստվային և քաղաքային միութիւնների հետ զուգընթաց, իշխանութիւնը դիմեց հարց տալով ներքին գործերի մինիստրութեան. վերջինս պատասխանեց՝ ժամանակաւորապէս փակել կոմիտէը և նրա հիմնադիրներին յանձնել դատարանին»։

◆ Մոսկվայի քաղաքային դումայի նիստում քննվեց էլեքտրաքարշի գործադուլի հարցը։ Ընդունվեց հետևեալ որոշումը. «Դուման ընդունում է, որ քաղաքային ձեռնարկութիւնների մէջ գործադուլն անթոյլատրելի է թէ խաղաղ և թէ մանաւանդ պատերազմական ժամանակ»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան օգտին Ժողովարանում նոյեմբերի 5-ին կազմակերպված ներկայացումները գրաւել էին հայ հասարակութիւնից շատ մեծ բազմութիւն, որ և մեծապէս նպաստեց նիւթական հասոյթին։

Հայ դերասանական ընկերակցութիւնը առաջինը ներկայացրեց «Արբենի Աւետարանը» 1 գործ. դրաման, որպիսի ընտրութիւնը համարում ենք աջող, ի նկատի ունենալով որ պիէսի բովանդակութիւնը համապատասխան է մեր ներկայ պատերազմական ժամանակին։ Պիէսի երկու գլխաւոր հերոսների դերերը յանձն էին առել տ. Սիրանոյշ (Ժան) և պ. Սեւումեան (Ծովակալ Մէնֆիլդ), որոնք և գեղեցիկ տարան իրանց դերերը։

Երկրորդը ներկայացվեց Բիւսոնի 3 գործ. «Պատմական Դղեակ» կօմէդիան, որի փոխարէն կարելի էր աւելի իմաստալի ու բովանդակալի ուրախ պիէս տալ։ Թէև այդ պիէսում դերակատարները մեր եղած յայտնի դերասաններն էին, բայց ընդհանուր խաղի մէջ նկատեցինք դեֆեկտներ, որոնցից մասնանշվելու հարկ է սովորական դերեր չիմանալը, որ մի տեսակ չարիք է հանդիսանում հայ բեմի վրա էն գլխից…

Այսօր Ժողովարանի բեմի վրա հերթական ներկայացումն է Շիլլէրի «Աւազակները»։

Ռեցենզենտ

ՄԱՄՈՒԼ

Թուրքեստանում լոյս տեսնող վրաց «Մեգոբարի» (բարեկամ) լրագիրը մի քանի համարներում «Մենք և հայերը» վերնագրով մի շարք յօդուածներ է նուիրել հայ-վրացական յարաբերութիւնների խնդրին, որի հեղինակ Իվ.-Ամ.-ը փորձում է լուծել այն խնդիրները, որոնք սուր են դառնում երկու դրացի հարևան ազգերի յարաբերութիւնների՝ որպէս թէ լարվելուն։ «Որպէս թէ» ենք ասում, որովհետև մենք հայ և վրացի ժողովրդի միջև չենք տեսնում ոչ լարված յարաբերութիւններ և ոչ էլ լարվելու առիթ։ Այս կամ այն լրագրի մէջ անհատների յայտնած աննպաստ կարծիքը այս կամ այն ազգի հասցէին՝ բնաւ չենք կարող վերագրել մի ամբողջ ազգի, հետևապէս և միանգամայն էլ հեռու ենք այդ անհատական թէկուզ հէնց ամենաաննպաստ կերպով յայտնված կարծիքները վերագրել ամբողջ ազգին և նրանից դուրս բերել լարված յարաբերութիւն…

Սակայն և այնպէս մենք կարևոր ենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել «Մեգոբարի» լրագրի յայտնած կարծիքի և նրա առաջարկած միջոցների հետ։ Ցաւում ենք, սակայն, որ այդ լրագրի բոլոր համարները, որոնց մէջ խօսվում է այդ հարցի մասին, ձեռքի տակ չունենք, այլ ունենք մի մասը միայն, որից և քաղում ենք այս տեղեկութիւնը։

Չափից դուրս նշանակալի երևոյթներ են տեղի ունենում մեր հարևան ազգի բանակում։ Բռնապետութեան ժամանակաշրջանն է երևան եկել նրանց համար։ Մարքսին էլլիզէնները, կոպիտ և յամրաքայլ իրականութիւնը հայ ազգի դիրքի մասին ձգեց մառախլութեան մէջ. սկսվեց հին ատյանների և նրանց գործունէութեան նորից վերագնահատումը։

Կոմս Վորոնցով-Դաշկովի… քաղաքականութիւնից յուսախաբված հայ ղեկավարները երկինք էին համնում ուրախութիւնից

. . . Եւ ահա հէնց սկզբից փտած հիմքի վրա կառուցված շինութիւնն արդէն տատանվում է, և այդ տատանումը անտարակոյս, ամենից աւելի զգաց նա, ով փակված էր այս տան մէջ և ում կեանքն էլ դրված էր այդ տան հիմնաւոր լինելու վրա։

Քար ու կրով ամրապնդված հայ միատեսակ մտածելակերպը խախտվեց և սկսվեց նրա ղեկավարների քաղաքականութեան պաշտպանների և դատապարտողների միջև վիճաբանութիւն։ Սա արդէն բարի նշան է։ Նրանց դժբաղդութիւնը հէնց այն բանի մէջ է, ինչ որ օգտաւէտ է ըստ ինքեան, եթէ միայն նա չափազանցված է և առաջ է տարվում խելացիօրէն։ Ես ի նկատի ունեմ նրանց սաստիկ և անխախտ դիսցիպլինան, որին մենք վրացիներս նախանձում ենք յաճախ։ Սակայն նրանց դժբաղդութիւնը հէնց այն տարօրինակ միապաղաղութեան մէջ է, որ ցոյց են տալիս նրանք իրանց ազգային գործերի մէջ։ Ամբողջ ազգը, որ լուռ է և ոչ մի ընդդիմադրութիւն չէ ցոյց տալիս, յաճախ այս ազգը դառնում է պատասխանատու իր ղեկավարների գործունէութեան համար։ Սոլոլակի պլուտոկրատիայի և Էջմիածնի կղերականների ձեռքին է այսօր այդ ղեկավարութիւնը։ Նրանք են առաջ տանում ազգի կործանարար շովէն քաղաքականութիւնը և նրանց գործունէութիւնն ազգը կամ լռութեամբ է տանում և կամ նպաստում է. հայի հարևան ազգը չի կարող հասկանալ անգամ, թէ այս լռութիւնը նշան է անգիտակցութեան՞, թէ իրագործումն է ազգի դիսցիպլինայի, որը լրվին հաւատում է իր ղեկավարների քաղաքականութեան և առանց ձայն հանելու հպատակվում նրանց։ Եթէ ազգը, հասարակութիւնը և ինտելիգենցիան լռութեամբ հետևում է Յարութիւնեանին և Մեսրոպին, հետևաբար սա ամբողջ ազգի քաղաքականութիւնն է, հետևապէս այս քաղաքականութիւնը արժանացել է ամբողջ ազգի հաւանութեան.—այսպէս մտածում է հարևան ազգի մասսան եւ։ Սրա համար էլ այն միանգամայն կանոնաւոր շփոթմունքը, որ հարևան ազգի մէջ առաջ է տանում հայ ղեկավարների նեխիչ և սուտ քաղաքականութիւնը, տրամաբանօրէն տարածվում է ամբողջ ազգի վրա։

Այս միապաղաղութիւնն արդէն խախտված է և հայ ազգի ղեկավար բանակում լսվում է բողոքի հատ ու կենտ առաջին ձայներ։ Որպէս առաջին յանդիմանութիւն և դատապարտութիւն ղեկավարների քաղաքականութեան, չափազանց ուշագրաւ է «Баку» լրագրի այս տարվայ № 238-ում լոյս տեսած յօդուածը, որ պատկանում է հայ յայտնի կին գրող Մարիէտա Շահինեանի գրչին։

Առաջ բերելով ապա այդ նամակի բովանդակութիւնը, լրագիրը շարունակում է.

Իր յօդուածում Շահինեանը ի նկատի ունի ռուսահայերին և, կրկնում ենք, ընդհանրապէս է նրանց շատ արհեստականօրէն։ Եթէ Շահինեանի այդ ընդհանրացումը թարգմանենք քաղաքական և սօցիոլոգիական լեզուով, կը ստացվի այն երևոյթը, որի մասին վրաց մամուլը միշտ ընդգծում է։

Հայերի կեանքի գլուխ է անցած հայ պլուտոկրատիան, որը իր անպէտք քաղաքականութեամբ կտրեց հայերի անունը թէ դուրսը և թէ ներսը։ Զինեց նրանց դէմ հարևաններին և ընտրեց այնպիսի խելառ ու շովինիստական երևակայութիւններ, որոնց հասնելը միանգամայն աննման էր նրանց համար։ Եւ ինչպէս վերն էլ յիշեցինք, հայերի մեղաւորութիւնը այս դէպքում կայանում է նրանում, որ այդ անձնաւորութիւնների, իրանց ազգային անունը կորցնողների դէմ ոչ մի ձայն չէին հանում։

Դրսից նայողին թւում է, թէ այդ սովդաքարների և չարչիների խումբն ամբողջ ազգի ցանկութեան և ձգտումների արտայայտիչն է։ Այս պատճառով Շահինեանի յօդուածը պէտք է համարել մի բաղդաւոր երևոյթ։ Եթէ այս համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ազգի կրած տանջանքները նրանց հայհացքը դարձնեն հին գործունէութեան մէջ, եթէ գիտակցվի, որ անհնարին է որ ազգի բաղդի տնօրինողը լինի սովդաքարութիւնը, եթէ աչքի անցնվի, թէ որպիսի սարսափելի թշնամի է նրանց «ազգային բէզպուտացէքն», մեզ կարող է ասել, որ այս զոհողութիւնը իզուր չէ կորել, որովհետև սրան կը հետևի հայ ազգի աչալրջութիւնը, դրացիական միութեան հաստատումը, ազգային քաղաքականութեան հիմնովին փոփոխումը, և այն ժամանակ հայութիւնն էլ դիւրութեամբ կը հասնի ազգային այն իդէալին, որը իրան նպատակ է ընտրել իւրաքանչիւր մեզ նման հալածված փոքրիկ ազգ։

Հայ ազգի ելքը, նրանց ազգային գաղափարների իրականացման միջնորդը կարելի է միայն հայ պլուտոկրատիայի և կղերականութեան՝ ասպարէզից հեռացումով և նոր ույժերի առաջ մղումով և դրացիական խաղաղ քաղաքականութեան առաջ մղումով։

ՎՐԱՑ «ՄԵԳՕԲԱՐԻ» ԹԵՐԹԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Ամեն մի ժողովուրդ, որ կամենում է կարգաւորել իր կեանքը ինքնագործունէութեան և ինքնավարութեան հիմունքի վրա, չի կարող առաջ գնալ առանց որոշելու իր վերաբերմունքը դէպի հարևանները։ Վրաստանն ունի իր քաղաքական իդէալը, և վրաց ժողովուրդը պէտք է որոշի իր վերաբերմունքը դէպի միւս հարևան ազգութիւնները։ Այսպիսի հարևան ազգութիւն մեր վերաբերմամբ հանդիսանում են հայերը, որոնց ճակատագիրը պատմական անցքերի ընթացքով կապվել է մեզ հետ։

Այն ուղղութիւնը, որին պատկանում է մեր թերթը, առանձին ժողովուրդների ազգային կեանքի և քաղաքական գոյութեան հիմք ընդունում է սրանց դաշնակցութիւնը կամ միութիւնը։ Քաղաքական զարգացումը տանում է դէպի նման միութիւնը։ Մենք ականատես ենք ընդհանուր նպատակի հասնելու համար մեծ ազգերի գործողութեան համաձայնեցումին։

Եթէ համաձայնութիւնները և միութիւնները անհրաժեշտ են խոշոր ժողովուրդների համար, ուստի մանր ազգութիւնների համար նման միութիւնը հանդիսանում է ուղղակի կեանքի և մահվան խնդիր։

Մենք սեփական ույժերով աշխատում ենք կարգաւորել մեր վերաբերմունքը դէպի մեր հարևան ժողովուրդները՝ հայերը, թուրքերը և այլն։ Բայց անհնարին է, ի հարկէ, մեր ապագայ յարաբերութիւնները հիմնել առօրեայ կեանքի զանազան մանր կեղտերի ու վէճերի վրա։ Հայ-վրացական յարաբերութեան ներկայ սրութեան համար կեանքը տալիս է բաւականաչափ առիթներ։ Այստեղ մի քանի պատճառներ ունեն կամ պակաս չափով բնական, իսկ միւսները ստեղծվել են արտաքին պայմաններից, որոնք միատեսակ են ազդում թէ մեզ և թէ հայերի վրա։ Այս բանը առաջին անգամը չէ ընդգծվում մեր ուղղութեան հրապարակութիւնների մէջ. այս բանը մենք կրկնում ենք և այժմ։ Այս բանը պէտք է յիշեն և վրացիները և հայերը, և երկուսն էլ ձգտեն միացման, որը հանդիսանում է անհրաժեշտ պայման լաւագոյն ապագայի։

Շատ կարելի է՝ մեր հարևանները այս չեն գիտակցում և թաքուն մտածում են իրանց բարգաւաճութիւնը կառուցել մեր դժբաղդութեան վրա։ Գուցէ նրանք ունեն առանձին ծրագիրներ իրանց մտայղացումները իրագործելու համար։ Այս բոլորը հնարաւոր է, բայց չէ՞ որ այդ կը լինէր ցնորք, որ կապացուցէր նման գաղափարակիրների քաղաքական կարճատեսութիւնը և երեխայութիւնը։

Գուցէ այս բանն արդէն գիտակցում են այն երազողները, որոնք երէկ տրամադրված էին խանդավառօրէն, իսկ այսօր ընկել են յուսահատութեան մէջ։ Ի՞նչպէս կարելի է ոչնչացնել մի ժողովուրդ, որը շատ դարերի ընթացքում կրել է ռազմիկ ժողովուրդների արշաւանքը, թոյլ չէ տուել զանազան կուլտուրական հոսանքների՝ ոչնչացնել իրան և մինչև այժմ էլ պահպանել է իր ազգային դէմքը, տերիտորիան և լեզուն։ Այս բանը անպայման պէտք է յիշեն մեր հարևան ժողովրդի հասարակական կարծիքի ղեկավարները և թողնեն ամեն տեսակ ցնորամիտ երազանքներ, եթէ միայն վերջինները մինչև այժմ գոյութիւն ունեն։

Անհրաժեշտութիւնը հարկադրում է մեզ և հայերին՝ գործել համերաշխ... Մեր թերթի էջերում պ. Իմ-ամ ջանում էր պարզել մի ճանապարհ հայերի և վրացիների գործողութեան համաձայնեցման համար և ընդհանուր կարծիքներ էր յայտնում կարգաւորելու Վրաստանի այն գաւառները, ուր ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են հայերը։ Յօդուածի հեղինակն առաջ է քաշում ազգային փոքրամասնութեան իրաւունքի սկզբունքը։ Այդ յօդուածը առիթ եղաւ մեր աջակողմեան մամուլի հանդէս գալուն։ «Зак. Рѣчь»-ը մինչև այժմ նկատած չը լինելով մեր գոյութիւնը՝ հարկադրված է ուշադրութիւն դարձնել մեզ վրա։ Ճիշդ է, այդ ուշադրութիւնը կրում է գայլագին բնոյթ, բայց ի՞նչպէս չը գովաբանել Թումանովի և Ամիրաջիբիի թերթը, երբ, երևում է, մենք շնորհաբաշխել ենք ամբողջ գաւառներ։ Կասկած չը կայ, որ յիշեալ թերթի ղեկավարները չեն կարող հասկանալ մեր հայեացքները և մեր փորձերը՝ հաստատել եղբայրական միութիւն հայերի հետ, որովհետև նրանք քաղաքական ծրագիր չունեն կամ, ճիշդը, նրանց ծրագիրը հայերի հասցէին հայհոյանքից հեռու չի գնում...

Նրանց քաղաքական ծրագիրը կայանում է սրան-նրան ծառայութիւն մատուցելու մէջ, նրանց տակտիկան կառավարութեան առաջ քծնելու մէջ։ Եւ այդ մարդիկ համարձակվում են խօսել կառավարութեան առաջ վրաց ժողովրդի անունից.—մենք ոչինչ չենք ցանկանում, մենք անշահախնդրութեամբ զոհ ենք բերում մեզ յանուն Ռուսաստանի մեծութեան։ Այս անպատասխանատու անձինք հաշւի չեն առնում առաջադիմական Ռուսաստանը և մտածում են Վրաստանի բաղդը կապել քաղաքական ներկայ կուրսը կրողներից, որոնք տապալված են Ռուսաստանի հասարակական կարծիքով։ Լրագիրը, ամենևին չը քաշվելով, յայտարարում է. «Ինչ վերաբերում է ռուս քաղաքական և հասարակական շրջաններին և կուսակցութիւններին, նրանք չեն, որ հանդիսանում են Ռուսաստանի բաղդը տնօրինողները, յամենայն դէպս ներկայումս։ Այդ պատճառով էլ այդ շրջանները հաշւի չը պէտք է առնել»։ Ահա այսպիսի լրագիր է վիճում մեզ հետ և յանդիմանում մեզ, որ մենք չենք պաշտպանում պատմական բնակութեան սկզբունքը։ Թոյլ տանք մի րոպէ, որ մենք իսկապէս հրաժարվել ենք Վրաստանի այն գաւառներից, ուր ապրում են ուրիշ ժողովուրդներ։ Այս բանում մեզ կարող են յանդիմանել այն շրջանները, որոնք կանգնած են մեզանից դուրս և որոնք անհրաժեշտ են համարում Վրաստանի քաղաքական կեանքը կառուցել նրա պատմական սահմաններում։ Այսպիսի յանդիմանութիւնն այդ շրջանների կողմից հասկանալի կը լինէր։ Սակայն նման ծրագիր չեն առաջադրում «Սաքարթվէլօն», «Закавказская Рѣчь»-ը և «Սամշօբլօն»։ Ընդհակառակը՝ «Սաքարթվէլօյի» խմբի ղեկավարներից մէկը դէմ էր ազնուականութեան յայտնի ուղերձին։ Այդ լրագիրների հետ կատարվում են տարօրինակ, մաղալու բաներ։ Նրանք մեզ հետ վիճում են պատմական սահմանների մասին, իսկ իրանք ինքնավարութիւն չեն պահանջում վրաց ժողովրդի րէալ բնակութեան սահմաններում։ «Իսկ նա, ով հանդիսանում է Վրաստանի բաղդի տնօրինողը, կարող է, երբ ուզենայ, նրան բարեկարգել այնպէս, ինչպէս այդ պահանջում է արդարութիւնը և պատմութիւնը»,—ասում է «Зак. Рѣчь»-ը։ Հարցնենք այս քաղաքագէտին, թէ արդեօք արդարութիւնը և պատմութիւնը այսօր չեն պահանջում բոլորովին այլ բան, ինչ որ սրանից հարիւր տարի առաջ, երբ ընդհատվեց Վրաստանի քաղաքական գոյութիւնը։ Միթէ Ռուսաստանում չը գիտէին, որ Վրաստանի քաղաքական գոյութեան դադարեցումը չէր կարելի համարել արդարացի։ Միթէ արդարութիւնը պահանջում է, որպէսզի այն ժամանակ, երբ վրացի-զինւորները զոհւում են իրանց՝ Ռուսաստանի պաշտպանութեան համար, մեղադրել դաւաճանութեան մէջ վրացական մի ամբողջ գաւառ՝ Աջարիան և պատժել բնակիչներին որպէս դաւաճանների։ Ահա այսպիսի արդարութեան է ծառայում այն խմբակը, որի քաղաքական գործունէութիւնը հայերի հասցէին ուղղված հայհոյանքից հեռու չի գնում։ Եւ երբ այս անձինք յանդիմանում են մեզ, որ մենք ինչ-որ տալիս ենք ում-որ, մեզ մնում է մատնանշել նրանց քաղաքական անկարողութիւնը և քծնողականութիւնը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս 3 նոյեմբ.

Ահա մէկ ամսից աւել է, ինչ Հաւլաբարի Րօզովի հրապարակի վրա, բաց օդի տակ, ընկած է բոլորովին անխնամ մի հիւանդ կին։ Պառկած է մայթի վրա, այդտեղ էլ գիշերում է փաթաթված մի պատառոտած շալի մէջ, գետնից հաւաքում և ուտում է ինչ որ պատահի։

Անցորդները մի ցաւակցական հայեացք գցելով՝ շարունակում են իրանց ճանապարհը, փողոցի տղաները հանգստութիւն չեն տալիս իրանց ծաղրով և հանաքներով, իսկ գիշերով գտնվում են անհատներ, որոնք մօտենում են իրանց հրէշային ծառայութիւնները մատուցանելու հիւանդին։

Այդ թշուառ կինը Հաւլաբարի Էջմիածնեցոց եկեղեցու միաբան, այժմ հանգուցեալ տէր-Բաղդասար և տէր-Մարտիրոս Ղամազեանցների հարազատ դուստրը և քոյրն է։

Մեր հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ հիւանդին խնամելու համար մեծ ծախս չի հարկաւոր, թէև հիւանդութիւնը հոգեկան է, բայց հնարաւորութիւն կայ միշտ տանը պահել մի ծեր-աղախնի հսկողութեան ներքոյ։

Դարձնում ենք հայ հասարակութեան ուշադրութիւնը և աւելացնում ենք, որ Թիֆլիսի հայ հոգևորականների անմիջական պարտքն է սփոփել և դարմանել յիշեալ թշուառ կնոջը. նրանք չեն կարող արդարանալ, թէ չեն իմացել. ոչ. նրանցից շատերը վաղուց տեղեակ են այս իրականութեան, բայց... Կարծեմ ի զուր է խօսել։

Գիտենք, նրանց գրպանից կոպէկ չի դուրս գայ, ինչպէս իրանք են ասում՝ «լեզգուց գանձանակը», բայց կարող էին զեկուցել վիճակաւոր առաջնորդին, որը անուշադիր չը պիտի թողնի այս երևոյթը, բաղխէին պ. քաղաքագլխի դուռը, խնդրէին մի կերպ տեղաւորել թշուառին քաղաքային ապաստարանում. իսկ առ ժամանակ, մինչև տեղ բացվելը, պատսպարէին, հոգալով չնչին ծախսը Թիֆլիսի հոգևորականների ապահովութեան միջոցներից, որի անդամները երկար տարիներ եղել են հիւանդի հանգուցեալ հայրը և եղբայրը։

Պատահական օգնութիւնները զուր կանցնեն։ Գ. Խ.

—

Սղնախ, 28 հոկտեմբերի

«Մշակի» № 234-ում Միսականը աշխատում է հերքել մեր գրածները «Մշակում» Նասոմխարի եկեղեցու վերաբերմամբ, սակայն նա հեռանում է ճշմարտութիւնից։ Եկեղեցին ցուցակով ունէր վեց շուրջառ (և ոչ հինգ)։ Դրանցից չորսը գտնվում է եկեղեցում, մէկը Ցարսկիէ-Կոլօդցիում, իսկ մէկը կորել է։ Գրողը մեղադրում է Ցարսկիէ-Կոլօդցիի քահանային անգործութեան մէջ։ Յիշեալ քահանան իրաւունք ունի միայն Նասոմխարում տարին երկու ամիս։ Չը նայելով այս կարճ ժամանակին, նա այնու ամենայնիւ գործ է շինել։ Նա աջակցութեամբ Գ. Փարեմուզեանի ժողովել է 33 ր. և եկեղեցու կարևոր պակասութիւնները լրացրել։ Նա դիմել է խնդրով օր. Ն. Սեբերբակեանին և 75 ր. յատկացնել է տուել զմի կտուրը ծածկելու համար, նոյնպէս 15 ր. շինութեան համար։ Ս. Փարեմուզեանի հետ տիկ. Տէր-Յակոբեանի նուիրած 100 ր. կարեոր իրեր գնել տուեց եկեղեցու համար։ Դիմեց Կ. Գալստեանին՝ խնդրելով ծածկել եկեղեցու կտուրը ցինկով, որի համար հարկաւոր է մօտ 500 ր., և նա յանձն առաւ։ Ժողովուրդը յաճախում է Նասոմխար ոչ միայն ամառը, այլ մարտից մինչև նոյեմբեր, իսկ ժամասացութիւն չի լինում նրա համար, որովհետև Սղնախի քահանաները խաչ դրին Նասոմխարի վրա, աւելորդ համարելով այնտեղ ժամասացութիւն։ Մատնանով կարելի է հաւաքել անշահ գումար. հակայ չունի։ N. N.

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

Կալկաթա, 8 սեպտ.

Նախորդ թղթակցութեամբ, որ լոյս տեսաւ «Մշակի» № 123-ում, յայտնել էի, որ հայ ազգի ճգնաժամային դրութիւնը, երբ բազմաչարչար և արիւնաշաղախ թիւրքահայերի գոյութեան խնդիրն է դրված հրապարակի վրա, իր ազդեցութիւնը գործեց նաև Հնդկաստանի նախաթոռ քաղաքի տարագիր հայերի վրա, որոնք զգացին պատմական և խորհրդաւոր րոպէի լրջութիւնը և շտապեցին այս հեռաւոր վայրից կատարելու իրանց նուիրական պարտականութիւնը և իրանց լուման արկանելու ազգի ընդհանուր գանձանակի մէջ։ Հաղորդել էի, որ տեղիս վիճակաւոր քահանաների նախաձեռնութեամբ և հրաւէրով՝ ընդհանուր ժողով կայացաւ, երբ շեշտվեց կարիքի մեծութիւնն և օգնութեան հրամայողական պահանջը, և միջոցներ ձեռք առնվեցին հանգանակութեան գործը աջողութեամբ գլուխ բերելու։

Ժողովը վերջանալուց յետոյ՝ անմիջապէս ձեռնարկվեց հանգանակութեան և տեղն ու տեղը 22,020 ռուփի*) ստորագրվեց։ Յիշեալ ժողովում ընտրված տիկնանց յանձնախումբը սրտեռանդն կերպով մի քանի տեսակ վիճակախաղեր սարքելով՝ 1803¼ ռուփի արդիւնք ունեցաւ։ Իսկ պ. պ. Արզար և ընկ. նուիրաբերեցին 15,000 ռուփի և երկու նուագով ուղղակի փոխադրեցին Վեհափառ Հայրապետին։ Աւղանիստանի սահմանագլխի մօտ գտնվող Պէշավար քաղաքից 7 հոգի հայեր Կալկաթայի օրաթերթերից տեղեկանալով ձեռնարկված գործի հետ՝ ինքնաբերաբար 185 ռուփի գումար փոխանցեցին տեղս։ Կալկաթայի բողոքականաց եպիսկոպոսը 50 ռուփի գումար նուիրեց և նամակով իր համակրութիւնն էր յայտնել դէպի հայերը։ Մի սկովտիացի տիկին Սիմլա քաղաքից մարդասիրական ոգով տոգորված՝ նամակ էր գրել և ներփակել 50 ռուփի, որպէս առաջին մասնավճար։ Նամակում ցաւ էր յայտնել, որ իր երկրում օգնութեան պահանջները շատ լինելով՝ չէ կարողացել շօշափելի մի գումար նուիրաբերել, և միևնոյն ժամանակ խնդրել էր տեղեկութիւններ հաղորդել հայ ազգի, կրօնի և եկեղեցու վերաբերեալ։ Նրա հետաքրքրութեանը գոհացում տալու համար ուղարկվեց ի միջի այլոց անգլիերէն լեզուով հայոց պատմութեան մի գիրք, որը խիստ բաւականութիւն էր պատճառել նրան։ Դաքայի և նրա շրջակայքում գտնվող Նարէնգանջ քաղաքի փոքրաթիւ հայերից, որոնք մեծ մասամբ զբաղված են հնդկականեփի վաճառականութեամբ, ստացվել է 3600 ռուփի, Դաքայի հայոց եկեղեցու վիճակաւոր քահանայի և երեցփոխի միջոցով։

Երբ հանգանակութեան գումարը հասաւ 55,000 ռուփիի (պ. պ. Արզարեանների նուիրաբերածը միասին հաշւած), հանգանակիչ յանձնախմբի քարտուղար Գարեգին ք. Յ. Կիրակոսեանը մի յօդուած հրատարակեց տեղիս ամենանշանաւոր օրաթերթում, ազդուապէս վեր հանելով հայերի կատարած գնահատելի դերը ներկայ ահեղալի պատերազմում և պաղատագին կոչ անելով Կալկաթայի ընդհանուր հասարակութեան բարեսիրտ և կարեկից անձանց մարդասիրական ազնիւ զգացմունքներին՝ օգնութեան ձեռք մեկնելու մարտիրոսացված թիւրքահայերին, որոնք դարեր շարունակ հեծել են սուլթանիզմի դաժան, բռնակալ և անագորոյն լծի տակ և որոնք այժմ ենթակայ են անասելի խժդժութեանց և սոսկալի կոտորածների, որոնց հետևանքով տասնեակ հազարաւոր փախստական-գաղթականներ աննկարագրելի նեղութիւններից յետոյ՝ ապաստան են որոնել Կովկասում, զրկված լինելով կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքներից և ներկայացնելով սրտակեղեք ու սրտաճմլիկ մի դրութիւն։ Ընթերցողներին ապա գաղափար տալու համար համիդեան վայրագութեանց մասին՝ թարգմանել էր «Մշակ» լրագրից մի թղթակցութիւն, որտեղ նկարագրված էր թիւրքական և քիւրդական կատարված գազանութիւններն Ուրմիայում և Սալմաստում, ռուսական պանծալի զօրքերի մուտք գործելուց առաջ։

Վերոյիշեալ կոչը հրատարակվելուց յետոյ՝ Գարեգին քհ., արհամարհելով տրոպիքական երկրի ամառային անտանելի շոգը, սկսեց անձամբ դիմել քաղաքի նշանաւոր առևտրական հաստատութիւններին և օգնութիւն խնդրել։ Թէև մի քանիսից բացասական պատասխան է ստացել և երբեմն կոպտաբար մերժվել, այնու ամենայնիւ աջողվել է նրան բաւական արդիւնք (18,000 ռուփի) ձեռք բերել և անվհատ դեռ շարունակում է դիմումները։

Նախանցեալ օրը հանգանակիչ յանձնախմբի գանձապահ՝ Յարութիւն Ստեփանոսեանի ձեռքով հեռագրով երկրորդ անգամ փոխադրվեց Վեհափառ Կաթողիկոսին՝ Լոնդոնի Հայկական Միացեալ Ընկերութեան միջոցով 1800 ֆունտ ստերլինգ (12,000 ր.)։ Առաջին անգամ փոխադրվել էր 8000 ր. փոխանակագրով, որը չափազանց ուշ էր հասել։

Անցեալ շաբաթ օր. Մարգարիտ Յ. Ստեփանոսեանի նախաձեռնութեամբ և մի խումբ տիկինների, օրիորդների և պարոնների մասնակցութեամբ՝ համերգ տրվեց տեղիս հայկական ակումբի շէնքում։ Ծրագիրը բաղկացած էր երգերից, արտասանութիւններից, նուագածութիւններից և երկու-երեք հակիրճ թատերական կտորներից։ Հանդէսը լաւ անցաւ և հաճելի տպաւորութիւն թողեց հայ և մի քանի օտար հանդիսականների վրա։ Յիշեալ համերգից ստացվում է 1000 ռուփի զուտ արդիւնք, յօգուտ հայկական նպաստամատոյց ֆոնդի (Armenian Relief Fund), որի համագումարն այժմ հասնում է մօտաւորապէս 74,000 ռուփիի։

Նամակս վերջացնելուցս առաջ արժէ յայտնել, որ Միջագետքում տեղի ունեցած կռիւների ժամանակ՝ անգլիացիների ձեռքն են անցել ի միջի այլոց 130. հոգի թիւրքահայ գերիներ, որոնք ուղարկվել են Բիրմանիստանի Թէյեատմայօ քաղաքը։ Ռանգունի վիճակաւոր տէր-Վահան քհն. Աղանեանն այցելել է գերիներին, կարճ ժամերգութիւն կատարել, հոգեօրապէս մխիթարել և նուէրներ բաժանել։ Գերիները չափազանց ուրախացել էին հայ քահանային տեսնելով, որից խնդրել էին յաճախ այցելութեան գնալ նրանց։ Ռանգունաբնակ հայերը ժողով են ունեցել և գումար հանգանակել գերիներին անհրաժեշտ հագուստեղէն և այլ իրեր մատակարարելու և դիւրութիւններ ընձեռելու համար։ Կալկաթայից պ. պ. Արզար և ընկ. 500 ռուփի նուէր են ուղարկել յիշեալ գերիների նպաստի համար։

Պօլարիս

---

*) 1 և կէս ռուփին հաւասար է 1 րուբլու։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԹԻՖԼԻՍ, Լեւոն Տէր-Յովհաննիսեանին.—Ձեր հասցէով խմբագրութեան մէջ Օրգովից ստացված է հեռագիր. բարեհաճեցէք կարգադրել՝ ստանալ։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր.	ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր.	առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Պուշկին., Վորոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏԵՆԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահաս.։

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահաս.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—191

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Յօգուտ «Մշակի» ֆոնդի

հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿԸ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Արաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 2. 0—2

КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.

760. 50—6 (Ե. 2.)

ՆՈՐ ՅՈՅՍ, ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՆՈՐ ՈՅԺ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ

Ջղայնութիւնը, ջղային թուլութիւնը, ընդհանուր թուլութիւնը և սեռական թուլութիւնը առաջանում են միմիայն գլխի և մէջքի անկանոն և թոյլ գործողութիւնից։

Այդ անկանոնութիւնը կարող է լինել ժառանգական, կամ առաջ է գալիս, երբ կեանքը պահանջում է մարդուց մեծ ծանր աշխատանք՝ նիւթական պակասութիւնների ժամանակ, կամ երբ մարդուն քայքայում են հազարաւոր վշտեր, մտածմունքներ, կարիք և կամ երբ նա հիւանդ է վարակիչ կամ ծանր հիւանդութիւններով, ինչպէս օրինակ սիֆիլիս, տիֆ, թոքախտ, մշտական փորկապութիւն և այլն, որոնք ի վերջոյ դարձնում են նևրաստենիկ։

Նևրաստենիայի և ջղայնութեան նշանները. 1) առաւօտ տեղից վեր կենալիս՝ զգում էք յոգնածութիւն, աչքերի մթագնութիւն, ընդհանուր մարմնային թուլութիւն, դառնում էք ջղային, բարկացող, ձեր յիշողութիւնը թուլանում է, տանջվում էք անքնութիւնից, սիրում էք միայնակութիւն, զգում էք երբեմն ցնցումներ մէջքի ցաւ, գլխի պտոյտ, ձեր մտաւոր և ֆիզիքական ույժը և առողջութիւնը կամաց-կամաց քայքայվում են, արագ շարժումների ժամանակ սիրտը անկանոն է բաբախում, ախորժակ չունէք, և այլն և այլն։

Մարդիկ յաճախ ուշադրութիւն չեն դարձնում այդ երևոյթների վրա, բայց յետոյ արդէն ուշ է լինում... Սկզբից և եթ պէտք է բժշկվել, ամրացնել մարմինը, պէտք է ուղեղից պակասած ֆոսֆորը լրացնել, առանց որի ուղեղը և ջղերը չեն գործում։

Ֆոսֆորը աւելացնում է մարդու մէջ աշխատանքի էներգիա, եռանդ, երիտասարդութիւն։

Պարիզի յայտնի բժիշկ Դիւզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆոսֆոր. այդ դեղը կոչվում է Ստիմուլօլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. Արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրօֆեսօրները, բժիշկները և հիւանդները տուել են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զարգացած սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Դիւզի հանճարեղ դեղով Ստիմուլօլով... Ահա ինչ են գրում Ստիմուլօլի բժշկութեան մասին բժիշկները։

Մեծարգոյ պարոն.

Մի ամսի չափ ուղեւորվելով արտասահման՝ իմ հիւանդներին թողնում եմ լի յոյսով, որ նրանց ջղայնութիւնն ամբողջովին կը բժշկվի Ստիմուլօլով։

Եկատերինօսլաւ, կլին-բժիշկ Դեմբօվսկայա։

Մեծարգոյ պարոն,

Ձեր ուղարկած մի տուփ Ստիմուլօլը գործածեց մի ջղային հիւանդ, որ ունէր ստամոքսի մաղասային թաղանթի անչափ զգայնութիւն, փորարատութիւն և սրտի անկարգ բաբախումն։

Իսկական Ստիմուլօլը պատրաստվում է Փրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործարանի դրոշմը՝ Institut „D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրօպական և Ռուսաստանի պրօֆեսօրների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 11|3 (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լրիվն, ճանապարհածախս չի վճարում։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ր. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ։

Գլխաւոր պահեստը ամբողջ Անդրկովկասի համար—Интернаціональное медико-фармацевтическое депо, Тифлисъ, Эриванск. пл., № 3.

(2.) 609. 10—10

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որը կայանալու է 1915 թւի նոյեմբերի 8-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին Ընկերութեան գրասենեակում, Սօլօլակսկայա փողոց, տուն Արաֆելովի, № 9.

ՊԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ ԿԸ ԼԻՆԻ

Վարչութեան առաջարկութիւնը՝ Ընկերութեան պատկանող գոյքը և Բագու—Թիֆլիսեան Նաւթարդիւնաբերական և Առևտրական Ակցիոներական Ընկերութեան ակցիաների վաճառելը։

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, նոյեմբերի 11-ին, չորեքշաբթի օրը երեկոյեան ժամը 7½-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։ (Ե. 3, 7) 777. 3—3

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.